



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

11/10

Հայոց գրականութեան
պահպանի և մասնավոր օպերատորի կողմէ
Առ-1367



ՔՈՒՆ

ԵՒ ԵՐԱԶ

Հարմ.
Հ 2-4925₂

2-4925₂

23 Ապ 2016

PA
4161

ՊԱՏՐԱՍ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ՝

1. Այտամոքսի հիւանդութիւնները (արգելվ լցու տեսաւ):
2. Վուն և երազ (լցու աեսաւ):
3. Իրաւունք և կոփւ:
4. Անոտիապաշտութիւն:
5. Բնութեան ոյժը, ինչպէս բժիշկ:
6. Կուէր հայ զինուորին (պատկերազարդ)

Լ. Ա. վեց գրքոյներից զցացած զուտ արգիւնքը
կուղարկուի Պարսկաստանում բացուելիք «Կալբանդեան
-Պատկանեան գիւղատնտես - արհեստագիտական դպրոց»ի
օգտին:

Վեր ժամանակի հակացական ձեռնարկութիւնները
արգիւնք են ոչ միայն առանձին անհատների զրհաբերու-
թեան, այլ ամբողջ հասարակութեան համակրանքի ու
ջանրերի

Դ. Ա. (Դ. Ա.) թիֆլիս, «Կառւտտէնբերգ» և «Ալենդ-
րոնական» գրավաճառանոցները.

ԲԱՑՈՒՅԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

«ԲԱՆԲԵՐ» ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐՈՒԵԱՏԻ

Պատկերազարդ հանդիսի, որ այս տարուանեց կըսկ-
սուի հրատարակուելլ (1). Պերտերբուրգում Հանդէսը լցու
կըտեսնի տարին երկու անդամ, ծաւալով՝ իրաքանչիւր
գիրը 20—25 թերթ գովանդակութեամբ ճոխ և շքեղ:
Վոաջին գիրը լցու կըտեսնի յունիսի վերջերին, միան-
գամայն անկախ բաժանմարդագրութեան հետևանքից:

Բաժանորդագինն է երեք (3) բուբլի, արտասահման
տաս (10) ֆրանկ: Հանդէսը կըխմբազրի Ար. Ա. Պոնց:

Հրատարակիչ Ա. Մելինեան:

Մեր հասցեն Նևսկի 55, Ա. Մելինեան:

Բժ. Ա. ԲՈՒԴՈՒՂԵԱՆ

ՔՈՒՆ ԵՒ ԵՐԱԶ

ԿԸ

(ՄԵԿ ՊԱՏԿԵՐՈՎ)

Հ/Յ


ԻՆՎ. № 21296

Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ

«Պուշկինեան արագատիպ» Հայկական տպարան


1903

Дозволено цензурою. С.-Петербургъ, 1 Марта 1903 года.



11-18635

«Пушкинская Скоропечатня», Лештуковъ, 4.



«ՔՈԻՆ ԵՒ ԵՐԱԶ»

ՀՐԱՄ. ԲԴ. Ա. ԲԱ-Տ-Ն-ՂԵ-Ն-Կ-Ե-

ԱՐԱՀԱԲԱՆԻ ՓՈԽԱԲԵՒ

Անցեալ 1902 թ. „Մշակի“ № 123-ում գետեղած էր հետեւեալ ուշագրաւ երկտողը.

—Կ. Պօլսի լրագիրներում մի քանի ժամանակներից ի վեր մենք տեսնում էինք „Նոր հրաշք մը“ վերնագրի տակ մի լուր, որի էութիւնը այն էր, թէ Արձաշում մի կին սուրբեր է տեսել:

Նոր և նոր տեղեկութիւններ էին հաղորդում լրագիրները, առանց յանդզնելու որևէ կասկած յացտնելու, իբրև իրողութիւն, իբրև փաստ, որի դէմ վիճել չէ կարելի:

Կարդում էինք այդ տեղեկութիւնը և չէինք զարմանում, որովհետեւ Կ. Պօլսի մթնոլորտում ուրիշ տեսակ վերաբերմունք դէպի այդ կրօնական հրաշքը չէր էլ կարելի սպասել:

Հասկանալի է, որ որքան էլ պարզ լինի, թէ հրաշքների դարը վաղուց անցել է անդառնալի կերպով, այնուամենայնիւ, ընդհանուրի տրամադրութեան շատ յարմար է գալիս նոր երեան եկած հրաշքի մասին մանրամասն պատմելը, աղմուկ հանելը:

Բայց վերչապէս բանականութիւնը յաղթող հանդիսացաւ, վերչապէս դժբաղդ ընթերցողների

պղտորուած միտքը կարող է մի քիչ պարզուել։
Արմաշի հրաշքը պաշտօնապէս հերքուեց վանքի
կողմից ահա ինչ է դրում թորգոմ վարդապետը
»Ծաղիկ« լրագրի մէջ։

Բարեպաշտ կին մը, որ ընտանիքին մէջ
կռւոտ դէպքեր անցած ըլլալուն համար, չէր կըր-
ցած Զատկի առթիւ հաղորդուել, առտու մը, ծրխ-
նելոյզին ներքելին կողմը կը կարծէ տեսնել պա-
տարագչի զգեստով եկեղեցականի մը կերպարանքը...»

Թերահաւատները կ'ձեփեն պատը առ ի փորձ,
բայց ի զուր, խղճահար կինը կը կարծէ տեսնել
միշտ նոյն դէմքը։ Իրողութիւնը կը հրապարակուի.
հետաքրքիրներ կը խուժեն, հաւատաւորի նախա-
գրաւումով։

Նատերը կը յախտարաբեն տեսնել, ինչ որ սա-
կայն ամենէն դիտելի կէտն է, ոչ թէ նոյն՝ այլ
մէկը Ս. Կուսին, երկրորդ մը Լուսաւորչի, ուրիշ
մը Ս. Սարգսի, ամեն ոք իր սիրած սուրբին դէմքը։
— Զաւեշտը իրեն արժանի վերջաւորութեամբ մը
փակելու համար, մէկը կը տարածայնէ պատուէր
ընդունած ըլլալ սուրբէն՝ թէ պէտք է մատաղ մը
զինուի, ծախքին կէսը հոգացուելով ժողովուրդին,
միւս կէսը տան տիրոջ կողմանէ։

Խեղճ մարդը, որ գահեկանին դէմ կը դողար,
կը ստիպուի այդպէս՝ երկու խոյի ծանրութեամբ

պարտքի մը տակ մտնել, կերակրելու համար խու-
ժան մը անօթիներ։

Այս է ահաւասիկ հրաշք (?) ըսուածը, որ
աւելի հեշտ՝ բացատրւող բանդագուշանք մըն է
միայն, և որ, գործնական օգուտ մը չունենալէն
զատ չբաւոր ընտանիքի մը ապրուստի պիւտնեին
վրայ չորս մէնիտէն աւելի պարտը մը բարդեց,
քանի մը քաղցած խաբերաներու ախորժակը պա-
րարելու համար միայն։

Հիմակ որ երկրագործի զբաղումները սկսած
են, և ուխտավայր (?) տունն ալ շերամով զրա-
ւած, իսպառ հանդարտուած է սուտ բարեպաշ-
տութեան ծիծաղելի և ցաւալի իրարանցումը...»

Ահա այդ երկտողն էր որ մեզ առիթ տուեց
ներկայ զրբոյկը կազմելու, զա էր, որ սափեց
ընթերցողների առաջ բաց անելու գիտութեան
կարծիքը այն երկոյթների մասին, որոնք շատերին
»հրաշք« են թւում, շատերի սնոտիապաշտութիւնն
են ուժեղացնում։

Գրքոյկիս անմիշական նպատակն է ցոյց տալ,
թէ ի՞նչ է քունը, ինչ է երազը, ցնորքը, լուսնո-
տութիւնը և երստազը, որոնք են զրանց պատ-
ճառները և որոնք-հետեւանքները։

ԲԺ. Ս. ԲՈՒԴՈՒՂԵԱՆ

Ս.-Պէտերբուդ 1903 թ.



Ա.

Քունը մարդուս ամենամտերիմ,
ամենասանշահասէր ընկերն է:

Իբրև խսկական բարեկամ նա մեզ
միշտ հաւատարիմ է մնում, առանց
ուշք դարձնելու թէ մեր շուրջը արդեօք բաղդա-
ւորութեան արևն է ժաղում, թէ դժբաղդու-
թեան մուժ խաւարը տիրում:

Իբրև անձնւէր ընկեր նա մեզ ուղեկցում է
մանկութիւնից մինչև մահ:

Որքան խախուտ ու դաժան է լինում կեանքը,
նոյնքան զգալի, նոյնքան ակնյալտնի է դառնում
քնի բարեկամութիւնը մեզ համար:

Նոյն խսկ ամենաթշւառ ու յոգնած մարդը քնե-
լուց յետոյ կազդուրում է, իր մէջ նոր ոյժ է
զգում: Քունը գոնէ մի քանի ժամով մոռացնել է
տալիս վիշտ ու աշխատանք:

Քունը ուժեղացնում է մարդուն և քաշալե-
րում է հետևեալ օրուայ ծանրութիւնը կրելու
համար: Նա երբեմն երաղի ձեռվ պատկերացնում

է այնպիսի երշանկութիւն, այնպիսի երանելիութիւն, որոնք դառն իրականութեան մէջ անմատչելի էին մարդու համար:

Քնի իսկական բարեկամութիւնը պարզ երեւմ է հէնց նրանից, որ նա մարդուն հաւատարիմ է մնում նոյն իսկ այն ժամանակ, երբ նրան հալածում են, երբ նրա բարիքները չեն գնահատում:

Հալածանք կը լուց յետոյ նա նորից վերագառնում է, եթէ նրան դարձեալ հեռու չեն վանում:

Առողջ քունը այնքան թանկագին է, այնքան բարերար, որ նրան փօխարինել չեն կարող աշխարհիս ոչ մի հարստութիւն, ոչ մի փառք:

Երբեմն նոյն իսկ հասարակ բանւորը նախանձէ զարթեցնում, երբ ծանր աշխատանքից յետոյ պառկում է իր կոշտ մահճակալի վրայ և խորմափալով քնում: Նրան նախանձում է այն հարուստը, այն մեծատունը, որ հարստութեան և փարթամութեան գրկում, չի կարողանում քնել, որը իր մետաքսէ անկողնում շարունակ այս ու այն կողմն է դառնում: Նա քնել է ուզում, բայց չի կարողանում: Քունը նրան մօտ չի դալիս: Այդպիսի դրութեան մէջ ամեն ինչ կորցնում է իր արժեքը:

Մարդ իրան թշուառ է զգում:

Այս, թշուառ է նա, ով հանգիստ քնել չի

կարողանում: Յաւից տանչւողը հանգստանում է միայն այն ժամանակ, երբ քունը մօտենում է նրան և հնարաւորութիւն տալիս գոնէ առժամանակ մոռանալ—աանշանքները:

Վայ նրան, ով քնել չի կարողանում:
Թէկ քունը խլում է մեր կեանքի զրէթէ երրորդ մասը, թէկ զրկում է մեղ աւելի երկար ժամանակ զործելու, մտածելու, դարձանալու հրնարաւորութիւնից, բայց այնուամենայնիւ ոչ ոք չի համածայնի քնելուց հրաժարուել և չի ուղենայ քնից ընդմիշտ բաժանուել:

Բնութիւնը շատ խելացի ու նպատակալարմար միշոցներ է տուել օրգանիզմի հաւասարակշութիւնը պահպանելու համար:

Ահա այդ միշոցներից մէկը քունն է:
Քնելու պատճառը, ասում են սովորաբար, յոդնածութիւնն է, իսկ նպատակը՝ թուլացած ոչքերի վերականգնեցնելը, նոր ոչքեր ձեռք բերելը: Ոչքեր՝ ապրելու և աշխատելու համար:

Բայց դժբաղգաբար գիտութիւնը գեռ շատ բան չի կարող ասել այդ մասին, որովհետեւ նա գեռ լիովին չէ ըմբռնել քնի ֆիզիոլոգիական պրօցեսը:

Բ.

Արթուն ժամանակ մենք շարունակ հաղորդակցութեան մէջ ենք արտաքին աշխարհի հետ Տեսողութեան, լսելիքի և այլ զգայարանքների միջոցով ստացած բազմազան տպաւորութիւնները հասնում են մեր ուղեղին—գիտակցութեան և այնտեղ մշակում, դասաւորում:

Թէ խաղաղ ժամանակ, թէ մթութեան մէջ ուղեղը շարունակում է աշխատել ու մաքեր ստեղծել, նա աշխատելուց չի դադարում նոյն խկ այն դէպքում, երբ այլևս արտաքին գրգիռներ չկան:

Բայց բոլորովին այլ բան է տեղի ունենում քնած ժամանակ՝ ուղեղն այլևս չի ենթարկում արտաքին միշտավայրի աղդեցութեանը: Դրգիռները կամ բոլորովին չեն աղջում նրա վրայ կամ աւելի մեջմ չափով են աղջում, քան թէ արթուն ժամանակ:

Փոքր աղմուկը չի հասնում մեր ականչին, թեթև շփումը չի զարթեցնում մեզ: Դրա համար անհրաժեշտ է աւելի ուժեղ աղդեցութիւն:

Արթուն ժամանակ մենք գիտակցօրէն կատարում ենք զանազան նպատակալարմար գործողութիւններ՝ կանգնում ենք, նստում ենք, ուտում խրմում ենք, խօսում - երգում ենք և այն և այն:

Խոկ քնած մարդը, ընդհակառակը այնպիսի

գրութեան մէջ է ընկնում, որ նրա մկանների լարուած գրութիւնը չքանում է, մարմնի անդամները հետեւում են ծանրութեան օրէնքին, ինչպէս անդամալուծութեան ժամանակ...

Շարունակում են միայն այն գործողութիւնները, որոնք մեր կամքից կախում չունին, առանց որոնց ապրելն անկարելի է: Դրանք են՝ շնչառութիւնը, սրտի զարկը, արեան շրջանառութիւնը, մարսողութիւնը և այլն: Բայց այդ գործողութիւններն էլ այնպիսի արագութեամբ չեն կատարում, ինչպէս արթուն ժամանակ:

Ուրիշ խօսքով ասած՝ քնած ժամանակ դադարում է մեր կամքից, այսինքն զլիի ուղեղից կախում ունեցող գործողութիւնը, շարունակում են միմիայն „ինքնաշարժ գործողութիւնները“:

Սակայն ի՞նչն է պատճառը, որ քնած ժամանակ ընդհատում է այսպէս ասած՝ „կամովին գործողութիւնը“:

Յայտնի է, որ գրեթէ մեր իւրաքանչիւր գործողութիւնը կախուած է մի որեւ է արտաքին պատճառից՝ ամենից յաճախ մեր անդամների գրգիռներից: Օրինակ, մենք ձեռք ենք երկարացնում այս կամ այն առարկան վերցնելու համար, որովհետեւ տեսնում ենք այդ առարկան և որովհետեւ տեսողութեան զգացմունքը մեր մէջ յանկութիւն է առաջ բերում այդ առարկան վերցնելու: Մենք

նստում ենք ճաշելու, որովհետև բաղցած ենք յի-
նում, որովհետև զանգի ծալնը կամ մարդու հրա-
ւերը մեղ կանչում է ճաշելու:

Զափազանց բազմաթիւ, բազմազան են այդ-
պիսի գրգիռները: Դրանք ստացում են մեր զգա-
յարանքների շնորհիւ և կրկնում են շատ յանախ:

Ահա այդ բոլորի հիման վրայ կարելի է ասել,
որ քունք գալիս է միայն այն ժամանակ, երբ ձե-
զանից հեռացնում ենք արտաքին աշխարհի ազգե-
ցութիւնը՝ տեսողութեան, լսելիքի, շօշափելիքի և
այլ զգայարանքների գրգիռները, երբ գաղարեց-
նում ենք մեր մտաւոր գործունէութիւնը:

Հենց զրա համար է, որ մենք քնելիս դնում
ենք խաղաղ ննջարանը, հանգնում ենք ճրագը,
պառկում ենք անկողնու վրայ և բոլորովին կրա-
սորական գիրք ընդունում:

Սակայն միայն արտաքին գրգիռների հեռաց-
նելով չի կարելի բացատրել քնելու միակ պատ-
ճառը: Տարիքաւոր և որոշ զարգացման տէր մարդ-
կանց ուղեղը ենթարկում է ոչ միայն արտաքին,
այլև ներքին գրգիռների ազգեցութեան:

Բոլորովին հանգիստ քնելու համար անհրա-
ժեշտ է միանգամայն գաղարեցնել ուղեղի գիտակ-
ցական գործունէութիւնը:

Գ.

Ինչպէս յայտնի է, թթուածինը օդի զլխաւոր
բաղադրիչ մասերից մէկն է:

Մեր օրգանիզմի մէջ մտած սննդատու նիւ-
թերը նրա շնորհիւ մշակում են և ապա գնում
մարմնի հիւսուածքները թարմացնելու և անեցնելու:

Այդ միենոյն թթուածինի միջոցով օրգանիզմը
այրում է անպէտք նիւթերը և օդի հետ դուրս
մղում:

Գիտութիւնը ցոյց է տալիս, որ օրգանիզմի
զանազան գրգիռները և առհասարակ կենարոնա-
կան նեարդային համակարգութեան ու զլխի ուղե-
ղի գործունէութիւնը կախուած է ուղեղային նիւ-
թի մէջ եղած թթուածնից:

Եթէ օրինակ, գորտի օրգանիզմը դրկենք
թթուածնից, այն ժամանակ առաջ կ'դայ այսպէս
ասած՝ յկասկածելի մահ«, այսինքն մի այնպիսի
գրութիւն, երբ գաղարում է ակտիւ գործունէու-
թիւնը:

Եթէ երկար շարունակենք այդ փորձը, այն
ժամանակ յկասկածելի մահը՝ կրդառնայ յիսկա-
կան մահ«, իսկ եթէ ընդհակառակը իր ժամանակին
բաց թողնենք թթուածինը, այն ժամանակ գորտը
նորից զգայուն և առոյգ կը դառնայ:

Այդպիսի յկասկածելի մահ« ամենայն իրա-

ւամբ կարելի է նմանեցնել քնին և նոյն իսկ, ինչպէս առաջարկում է Պերլիւգերը, անուանել արագարձակ քուն:

Արթուն ժամանակ թթուածինի աղղեցութեան տակ բոլոր անդամներում, ուրեմն և ուղեղի մէջ, կատարւում է ալրումն, այսինքն ածխածինի արտադրութիւնը:

Բայց անդամներից ոչ մէկը այնքան կախում չունի թթուածինի քանակութիւնից, որքան ուղեղը, ոչ մի հիւսւածքում ալրումը կամ ուրիշ խօսքով ասած՝ ածխածինի արտադրութիւնը այն չափով չի կատարւում, ինչ չափով ուղեղի գորշ նիւթի մէջ:

Հասկանալի է ուրեմն, որ ուղեղի լարուած և տեղական գործունէութիւնը կարող է վերջ ի վերջոյ կլանել—սպառել ամբողջ թթուածինը: Ալդպիսի պայմաններում արիւնը չի կարողանում հարկաւոր քանակութեամբ թթուածին հասցնել:

Հէնց այդ պատճառով էլ առաջ է գալիս կասկածելի մահ կամ քուն:

Բայց ըստ երեսիթին այդ դեռ բաւական չէ: Վերեւում նկատեցինք, որ տեսողութեան, լսելիքի և այլ տեսակ զգացողութիւնները որոշ աղղեցութիւն են ունենում ուղեղի գործունէութեան վրայ: Ուրեմն անհրաժեշտ է զգալարանքների գործունէութիւնն էլ զաղարեցնել, որպէսզի հնարաւոր լինի խաղաղ ու հանգիստ քունը:

Դ.

Կենդանի օրգանիզմի իւրաքանչիւր գործունէութիւնը մշտապէս ենթարկում է կենտրոնական նեարդարին համակարգութեան աղղեցութեանը:

Այս վերջինիս զանազան մասերի մէջ զիսաւոր տեղը բռնում է զլիսի ուղեղը:

Նա է տալիս զիտակցական, հոգեկան ու ֆիզիքական գործունէութեան բոլոր նշանները:

Երբ ուղեղի կենսական եռանդը թուլանում է, այն ժամանակ հարկաւոր է մի այլ զրգիռ, որպէս զի ուղեղը մնայ կենսունակ զրութեան մէջ:

Դրա համար ծառայում են մեր զգալական նեարդերի զրգիռները—բառիս ամենալայն մտքով:

Երբ որ, օրինակ, ցերեկուայ աշխատանքից յոդնած երեկոյեան գնում ենք հիւր, թատրոն, պարերեկոյթ, համերգի և այլն, այն ժամանակ պայծառ լուսաւորութիւնը հմայիչ երաժշաութիւնը, հրաշալի ծաղիկները և ուրիշ շատ բաներ, տեսողութեան ու լսելիքի միջոցով ազդում են ուղեղի վրայ և զրանով էլ գոնէ առժամանակ կայտառացնում են մեր թուլացած մարմինը:

Ուրեմն արհեստական միջոցով էլ կարելի է պահպանել կենսունակ զրութիւն և հեռացնել քունը, բայց վաշտ շատ վնասակար ու վտանգաւոր է:

Այդ միւնոյն բանը պատահում է և այն ժամանակ, երբ մինչեւ առաւօտ որոշ աշխատանք վերջացնելու համար գրգռիչ խմիչքներ ենք ընդունում, օրինակ՝ թէլ, սուրճ, գինի և ալյն, որպէսզի քնի առաջն առնենք:

Յիշեալ խմիչքները ազդում են ստամոքսի մաղասային թաղանթի վրայ, իսկ վերջինս անդրագարձնում է այդ գրգիռները և հասցնում ուղեղին:

Բացի դրանից՝ գրգռիչ նիւթերը ազդում են նաև սրտի ու արեան շրջանառութեան վրայ և դրանով մարդուն մի առանձին կայտառութիւն տալիս:

Այդ դէպքում ուժեղանում է թթուածինի հոսանքը դէպի մարմնի բոլոր անդամները, որոնց թւում և դէպի ուղեղը:

Իդուր չէ, որ քնի մասին գոյութիւն ունեցող կարծիքներից մէկը պնդում է, թէ քունը առաջ է գալիս ուղեղի արեան սակաւութիւնից, այսինքն այն դէպքում, երբ պակասում է ուղեղի մէջ եղած արեան քանակութիւնը:

Ամենքին էլ լաւ յայտնի է, որ գործունէութեան համար իւրաքանչիւր անդամ պահանջում է արեան առատ հոսանք:

Բացի դրանից ապացուցուած է, որ երբ ուղեղի այս կամ այն մասում արիւն չի հոսում,

այն ժամանակ մարմնի համապատասխան մասը կորցնում է գործելու ընդունակութիւնը:

Յայտնի է նաև այն, որ երբ ուղեղի վերին մասերում պակասեցնում են արեան քանակութիւնը, այն ժամանակ մարդ բոլորովին կորցնում է գիտակցութիւր:

Ահա այդ փաստերի վրայ հիմնուելով, մի քանի գիտնականներ գտել են մի առանձին գործիք, որ յայտնի է ցցերեբրոմետր (*Cerebrometer*) անունով:


Այդ գործիքի միջոցով գտել են, որ քնած ժամանակ ուղեղի մէջ քիչ արիւն է լինում, իսկ արթուն ժամանակ շատ:

Սակայն լիշեալ փաստերը գեռ բաւական չեն հաստատելու այն կարծիքը, թէ քունը ուղեղի ցարեան սակաւութիւնից է առաջ գալիս:

Կարող է պատահել, որ ուղեղի արեան սակաւանալը քնի հետեւանքն է և ոչ պատճառը:

Վերեւում արդէն ասեցինք, որ մի օրեւ է անդամի գործունէութեան ժամանակ ուժեղանում է արեան հոսանքը: Թւրեմն այս դէպքում արեան առատութիւնը գործունէութեան հետեւանքն է և ոչ թէ պատճառը:

Ճիշտ միւնոյնը կարող է պատահել և ուղեղի մէջ:



b.

Այժմ հասկանալի է, որ մեր կեանքը պահպառնելու համար մենք պէտք է գործածենք թթուածին, այսինքն այն զաղից, որը մեղ շրջապատող օդի բաղադրիչ մասերից մէկն է կազմում:

Ամենից շատ թթուածին պահանջում է ուղեղը, որպէսզի կանոնաւոր կերպով կատարէ իր ֆունկցիաները: Նրա այդ պահանջին բաւարարութիւն է տալիս արիւնը:

Երբ ուղեղը չի ստանում հարկաւոր բանակութեամբ թթուածին, այն ժամանակ առաջ է դալիս անդիտակցական դրութիւն:

Առհասարակ աշխատող մկանի մէջ թուլացնում են նրա գործունէութեան ընդունակութիւնը:

Իւրաքանչիւր շնչառութիւն, արեան իւրաքանչիւր դարձիր, տեսողութեան, լսելիքի, հոտոտելիքի, շօշափելիքի առաջացրած իւրաքանչիւր երեւոյթը մկանալին ու նեարդալին աշխատութեան արդիւնքն են կազմում:

Ուղեղի մէջ էլ, նրա գործունէութեան շնորհիւ, միշտ գոյանում են այսպէս ասած՝ յլոգնածութեան նիւթեր՝ կամ ինչպէս Պրէյերն է անուանում՝ յազօնօգենեան նիւթեր՝, որոնք թուլացնում են ուղեղի ուժը:

Երբ ուղեղի և մկանների գործունէութիւնը

երկար է տևում և այդ պատճառով յլոգնածութեան նիւթերն էլ աւելանում են, այն ժամանակ մի որևէ է գործողութիւն կատարելու համար անհրաժեշտ է աւելի մեծ չանքեր, աւելի մեծ եռանդ գործ դնել, քան թէ սովորաբար:

Այդ գէպքում մարմնի անդամները ծանրութեամբ են շարժւում, մարդ դժուարութեամբ է մտածում, աչքերը—բաց անում, լսում, խօսում և ալն: Մի խօսքով՝ յոգնածութիւնը պաշարում է մեղ և մենք քնելու կարիք ենք զդում:

Անկասկած քունը մեծ կախում ունի ուղեղի արեան շրջանառութիւնից: Ոմանք կարծում են, թէ դորա պատճառը ուղեղի երակների լայնանուլը ու արիւնով լցուելն է, ոմանք էլ ենթագրում են, թէ ընդհակառակը երակների նեղանալն ու արեան սակաւութիւնն է քնի բուն պատճառը: Իսկ թէ այդ կարծիքներից որն է նիշար—գեռվերջնականապէս հաստատուած չէ:

Յամենայն գէպս մի շարք փաստեր ու փորձեր ցոյց են տալիս, որ աւելի հաւանական կարող է լինել երկրորդ կարծիքը:

Եւ իսկապէս՝ անքնութեանը նպաստում են այն բոլոր միշտները, որոնք աւելացնում են ուղեղի արեան բանակութիւնը, այսինքն արագացնում են արեան հոսանքը դէպի ուղեղը:

Իբրև ապացոյց բաւական է աչքի առաջ ու-
նենալ հետեւելը:

Մեծ քանակութեամբ արիւն կորցնելիս մենք
ուշագնաց ենք լինում. և այդ դրութիւնը շատ
նման է լինում յանկարծահաս քնին:

Այդ դէպքում զիտակցութիւն կորցնելը առաջ
է գալիս ուղեղի արիւնատար անօթների արագ
սեղմուելուց, որի պատճառը արեան պակասելն է
լինում:

Եթէ այդ ժամանակ կախ գցենք դլուխներս
և թոյլ տանք, որ մարմնից արիւնը նորից հոսէ
ուղեղի մէջ, այն ժամանակ կանցնի ուշագնացու-
թիւնը և կ'վերադառնայ զիտակցութիւնը:

Ինչպէս յայտնի է, բոլոր սակաւարիւն մար-
դիկ քնկոտ են լինում: Բայց երբ նրանք պառկում
են, այսինքն մարմնին հօրիղոնական դիրք են տա-
լիս, այն ժամանակ քունը փոխնում է, որովհետեւ
արիւնը հեշտութեամբ հոսում է դէպի ուղեղը:

Ոտքի կանդնելիս դքանք կարճ միջոցից յետոյ
նորից քնելու հակումն են զգում:

Ուղեղի արեան դանդաղ շրջանառութիւնը
բթացնում է զիտակցութիւնը և առաջացնում է
քնկոտութիւն, իսկ արագ շրջանառութիւնը լնդ-
հակառակը միշտ վառ է պահում զիտակցութիւնը
և հեռացնում է քունը:

Բազմաթիւ փաստերով, նոյն իսկ անձնական
փորձով կարելի է հաստատել այդ բանը:

Արեան առատ հոսանքը դէպի ուղեղը կարող
է առաջ դալ զանազան պատճառներից՝ օրինակ,
բարկութիւնից մտաւոր լարուած դրութիւնից,
հոգեկան վրդովմունքից, վշտից, ուրախութիւնից և
այլն:

Այդ բոլոր դէպքերում անքնութիւնը կարող
է լինել երկարատև կամ կարճատև, արեան հո-
սանք առաջացնող պայմանների համեմատ:

Զ.

Երկար ժամանակ մենք չափազանց սահմանա-
փակ տեղեկութիւններ ունեինք քնի մասին, իսկ
վերջերս զիտակցութիւնը մի խոշոր քայլ արեց դէպ
առաջ:

Զպէտք է մոռանալ, որ քունը ուղեղի գունկ-
ցիաներից մէկն է, իսկ ուղեղը ուսումնասիրելը
չափազանց դժուար է, որովհետև նրա հիւթը չա-
փազանց նուրբ ու բարդ է:

Այստեղ միայն մի քանի խօսքով կարող ենք
միշել, որ Փարիզի պրօֆէսուր Դիւալի և նրա ա-
շակերտների շնորհիւ հնարաւոր դարձաւ գոնէ մօ-
տաւորապէս բացատրել, թէ ի՞նչ է քունը:

Զանազան կենդանիների վրայ բազմաթիւ ու

բազմաղան սրամիտ փորձեր կատարելով, նրանք համոզուեցին, որ արթուն ժամանակ նեարդերը իրանց ծառածեւ հիւղաւորութիւններով—(Նեվրօն) քսւում են իրար և այդպիսով արտաքին տպաւորութիւնները հասցնում են զիտակցութեան կենտրոնին—ուղեղին: Իսկ քնած ժամանակ նեարդալին բջիշները ներս են քաշում իրանց յոտքերը, ուստի և նրանց փոխաղարձ հազորդակցութիւնն ընդհատում է:

Որբան շատ են կրծատւում նեարդալին վերշաւորութիւնները, նոյնքան խոր է լինում քունը, որովհեաւ այդ դէպքում արտաքին տպաւորութիւններին չափաղանց դժուար է լինում յաղթել —անցնել նեվրոնների մէջ եղած մէծ տարածութիւնը:

Այդ մասին աւելի երկար խօսել չենք կարող: Կարծում ենք ասածն էլ բաւական է:

Ինչ էլ որ լինի քնի պատճառը, այնուամենայնիւ փորձերը ցոյց են տալիս, որ լաւ քնելու համար անհրաժեշտ են հետեւեալ պայմանները, նախ հարկաւոր է ընդունակութիւն ունենալ ընդհատելու ուղեղի այն աշխատանքը, որով նա դրազուել է օրուայ ընթացքում: Երկրորդ, հարկաւոր է կանոնաւոր կերպով արիւն հասցնել ուղեղին, այնպէս որ արեան քանակութիւնը լինի ոչ չափաղանց շատ և ոչ էլ չափաղանց քիչ:

Նոյնպէս չ'պէտք է մոռանալ այսպէս ասած՝ „սովորական գործողութիւնների օրէնքը“, որը շատ մէծ գեր է խաղում քնելու հարցում:

Ուղեղը որբան էլ քիչ աշխատած, քիչ լոգնած լինի, այնուամենայնիւ որոշ ժամանակում կուզենայ քնել, որովհետեւ երկար տարիների ընթացքում այդ բանը նրան համար արդէն սովորութիւն է գարձել:

Մարդու կամքից կախուած է միայն մի բան, այսինքն քնելու ժամանակ նա պէտք է իրանից հեռացնէ արտաքին աշխարհը:

Դրա համար կան բազմաթիւ միջոցներ, որոնց մի մասը ներդորձում է ուղղակի, իսկ միւս մասը՝ կողմնակի կերպով:

Ուժեղ կամքի տէր մարդկանցից շատերը կարողանում են ցանկացած ժամանակը հանդարտեցնել իրանց ուշագրութիւնը: Այդպիսի ընդունակութեան շնորհիւ նրանք կարողանում են քնել, երբ որ ուղենան:

Առհասարակ երբ մարդ գիտէ թէ քնելու համար ինչ բաներ են հարկաւոր, այն ժամանակ նա կարող է երբեմն գտնել նպատակայարմար միջոցներ:

Քնի հարցում շատ մէծ գեր են խաղում՝ թէ տարիքը և թէ աշխատանքը:

Առանց բժշկի խորհրդին երբէք չըպէտք է ընդունել քնեցնող գեղեր:

է.

Վերոյիշեալ տեղեկութիւնները մեղ համար շատ կարեոր են, որովհետեւ նրանց շնորհիւ մենք կարող ենք գնահատել բնական քունք, որը այնքան բարերար ազդեցութիւն է ունենում մեր կեանքի ու տռողջութեան վրայ:

Մեղանից իւրաքանչիւրը ամեն օր կարող է հենց իւր վրայ փորձել: Թէ նա որքան թարմ, ուժեղ ու առոյգ է զգում իրան լաւ քնից լետոյ:

Ամենօրեայ փորձը ցոյց է տալիս, որ քնից զարթնելիս մարդու մտաւոր ու ֆիզիքական ոլժերը միշտ աւելացած են լինում:

Կարելի է ասել, որ քունք թէ ֆիզիքական և թէ հոգեկան միւնոյն դերն է խաղում, այսինքն վերականգնեցնում է արթուն ժամանակուալ գործունէութեան պատճառով թուլացած ոլժերը, թարմացնում է մարմնի զանազան հիւսուածքները և նոր եռանդ է տալիս անդամներին:

Ալդ հանգամանքն աչքի առաջ ունենալով, մենք կարող ենք բացատրել նաև երկարատեւ քնի մի քանի հետևանքները:

Այսպէս օրինակ, մօտաւորապէս մի ամիս հասակ ունեցող երեխաները զրեթէ ամբողջ ժամանակը քնում են, որովհետեւ այդ դէպքում նրանց մարմինը արտասովոր արագութեամբ է անում:

Տարիքաւոր մարդք, որ արդէն հասել է ֆիզիքական զարգացման գագաթնակետին, պէտք է վերանորոգէ իր մարմնի հիւսուածքները միայն այն չափով, որ նրանք մաշւում են ամենօրեայ գործունէութիւնից:

Իսկ նորածին երեխայի օրգանիզմը պէտք է ոչ միայն պահպանէ իր հաւասարակշռութիւնը, այլև արագ անց ու զարգանայ:

Հասկանալի է ուրեմն, որ նա համեմատաբար աւելի մեծ քանակութեամբ կերակուր պիտի ընդունէ, և աւելի շատ ժամանակ գործազրէ այդ կերակուրը մարսելու և շահագործելու համար:

Ուրիշ խօսքով ասած՝ նորածին երեխան իր կեանքի առաջին շրջանում պէտք է գրէթէ բացառապէս խմէ և քնէ:

Սովորաբար ծերունիները աւելի քիչ են քնում, քան թէ երիտասարդ և միջահասակ մարդիկ:

Պատճառը հտականալի է. նրանց մարմինը յետադիմութեան—ըեզրեսսի շրջանումն է գտանւում, քան թէ շահիլ ժամանակ:

Այսպէս ուրեմն քունը այն միջնորդն է, որը նպաստում է մարմնի զարգացմանն ու պնդութեանը, որ պահպանում է մարմնի նիւթերի հաւասարակշռութիւնը, լրացնում է հոգեկան ու ֆիզիքական գործունէութեան պատճառով տեղի ունեցած կորուստները և այն և այլն:

Կարելի է ասել՝ ցերեկը մաշում է մեր մարմինը, իսկ զիշերը վերանորոգում, թարմացնում:

Հասկանալի է ուրեմն, թէ որքան նպատակաշարմար բարեգործութիւն են կազմում աղքատդասակարգի համար շինուած զիշերային ապաստարանները:

Դժրաղդաբար շատ քիչ քաղաքներում կան այդ բարերար հիմնարկութիւններից:

Է.

Ժողովրդի մէջ վաղուց արդէն գոյութիւն ունի այն կարծիքը, թէ մարդ պէտք է քնի օրական վեց-եօթը ժամ, թէ ամենախելացի ծեն է կէս զիշերից շուտ պառկել քնելու:

Բայց անկարելի է բոլոր մարդկանց համար մի ընդհանուր չափ սահմանել:

Աշխարհումս ոչ մի մարդ իր մարմնի կազմովն ու առանձնայատկութիւններով նման չէ մէկ ուրիշն:

Հէնց այդ պատճառով էլ իւրաքանչիւր անհատը քնելու մի առանձին չափ ու սահման պիտի ունենայ իր մարմնի պահանջների, իր տարիքի և գործունէութեան համեմատ:

Թէ քունը և թէ արթուն դրութիւնը մարմնի բնական պահաջն են կազմում, ուստի մարդուն

պէտք է թողնել քնելու մինչև որ ինքը զարթնի:

Յամենայն դէպս պէտք է աչքի առաջ ունենալ, որ երեխաների համար 6—7 ժամ քնելը չափազանց քիչ է: Ինչ վերաբերում է տարիքաւոր մարդկանց, նրանք կարող են քնել օրական ութր ժամ, իսկ ծերունիները—եօթը ժամ:

Սւելի լաւ է շուտ պառկել քնելու և շուտ էլ վեր կենալ, ինչպէս որ այդ անում են արտասահմանում:

Առողջապահական տեսակէտից նպատակայարմար է նախաճաշել ժամը 12—1-ին, ճաշել երեկոյեան 6—7 ժամին, իսկ նախաճաշի և ճաշի արանքում կարելի է գործածել թէյ, սուրճ, կակաօ, կաթ և մրգեղէն: Լաւ չէ քնելուց առաջ ստամոքսը ծանրաբեռնելլ:

Առհասարակ պէտք է քնել այն ժամանակ, երբ մարմինը պահանջ է զգում և այնքան, որքան որ նա է ուզում:

Մի գեղեցիկ ասացուածք կայ, թէ յով որ իրան ուղեցոյց է ընտրում քնութիւնը, նա երբէք չի խաբուի, չի մոլորուի:

— »Ոչինչ չի կարելի ասել ոչ շուտ զարթնելու, ոչ էլ զիշերային զբաղմունքների դէմ, զրում է անդիմացի Բլուկը, Եթէ միայն քնի ժամանակը չի կրնատւում:

— Բոլորովին միւնոյն է, թէ ո՞ր ծալրից կայ-

բէք մոմր, բայց եթէ նրա երկու ծալրից էլ ալրէք,
այն ժամանակ նա շուտ կ'հալչի—կ'ոչնչանայ:

Եթէ դուք ուշ էք պառկում քնելու, ուշ էլ
վեր ետքէք»:

Աձենքն էլ խոստովանում են, որ ֆիզիքական
ժանր աշխատանքից յետոյ անհրաժեշտ է համա-
պատասխան հանգստութիւն: Բայց ֆիզիքական և
մտաւոր աշխատանքը միևնուն չափով հանգստու-
թիւն չեն պահանջում:

Մտաւոր աշխատանք ունեցողը պէտք է աւելի
երկար քնի:

Իսկ ի՞նչ չափի ու աստիճանի պէտք է լինի
երեխաների քունք:

Թ.

Սրանից երկու աարի առաջ Պետերբուրդի
ողինուրական բժշկական նեմարանից պրօֆեսոր-
ներից կազմուեց մի մասնաժողով, որպէս զի որոշէ,
թէ դպրոցական շրջանում որքան քուն է հարկա-
ւոր երեխաներին:

Մասնաժողովը ուշադրութեան առաւ զանա-
զան հասակներին համապատասխանող մտաւոր ու
ֆիզիքական աշխատանքի միջին չափը և դրա հա-
մեմատ էլ կայացրեց իր որոշումը:

Ալդ որոշման դիմաւոր կէտերը, որոնց հետ

համաձայնեցին նաև նեմարանի անդամները, հե-
տեւալներն էին.

Մանկական և պատանեկական օրգանիզմը
զգալի կերպով կ'վնասուի, եթէ նրա աշխատանքի
(թէ մտաւոր թէ ֆիզիքական) ու հանգստութեան
մէջ պահանջուած համաչափութիւնը խանգարուի:

Ազգիսի խանգարումները շուտով առաջաց-
նում են մտաւոր թուլութիւն, չղայնութիւն, մար-
սողութեան խանգարումն և ալլն:

Զի կարելի որոշ կանոններ սահմանել քնի
տեղութեան մասին: Ճիշտ է, այժմ զինուորական
դպրոցներում հասակաւոր աշակերտներին թող են
տալիս ութը ժամ քնել, իսկ փոքրերին—իննը ժամ,
բայց դա նպատակայարմար միջոց չէ:

Քնի տեղութիւնը կախում ունի ոչ միայն
ամենօրեալ մտաւոր ու ֆիզիքական աշխատանքից,
ալլ նաև ուրիշ պայմաններից՝ տարուայ եղանա-
կից, կլիմակից, տեղադրութիւնից, օդի մաքրու-
թիւնից, բնակարանի բարեխառնութիւնից և վեր-
շապէս անհատական առանձնայատկութիւնից:

Պրօֆէսորների մասնաժողովը նպատակայար-
մար ժանաչեց քնի հետեւալ սահմանները: Ա) I փոքր
հասակի համար, այսինքն մինչև տասը տարեկան
հասակը 10—11 ժամ. Է) II փոքր հասակի հա-
մար, այսինքն մինչև 12—13 տարեկանը 9—10

Ժամ. ՞) III բարձր հաստիք համար, այսինքն 13
տարեկանից սկսած 8—9 ժամ:

Այդ թիւերը ցոյց են տալիս քնի իսկական
տեղութիւնը և ոչ այն ժամանակը, որ անհրա-
ժեշտ է հանդստութեան ու քնի պատրաստութեան
համար, առաւօտ հազնուելու համար և այն:

Թուլակաղմ և սակաւարիւն երեխաներին
բժշկի խորհրդով կարելի է թոյլ տալ կէս կամ մէկ
ամբողջ ժամ սովորականից աւելի քնելու:

Լարուած մատոր կամ ֆիղիքական աշխա-
տանքի ժամանակ էլ պէտք է աւելացնել քնի տեղ-
ութիւնը կէս կամ մի ժամով, օրինակ կրկնու-
թիւնների—քննութեան ժամանակ և այն:

Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ
է կամ երեկոները սովորականից շուտ պառկել
քնելու կամ առաւօտները ուշ վեր կենալ:

Թող մեր հոգեոր դպրոցներն էլ աչքի առաջ
ունենան վերոցիշեալ խելացի կանոնները:

Այստեղ աւելորդ չի լինի նկատել, որ մեր
ծնողներից շատերը երբեմն երեխաներին էլ թոյլ
են տալիս մեծերի հետ նստելու մինչև ուշ գլշեր
երբ տան հիւրեր են լինում:

Բայց դա վատ սովորութիւն է և վնասակար:

Ճ.

Այժմ մի քանի խօսք ասենք անքնութեան
մասին: Անքնութիւն ասելով պէտք է հասկանալ
այն գրութիւնը, երբ մարդ կորցնում է մի քանի
ժամ անքնդհատ քնելու քնդունակութիւնը:

Կարելի է ոյժ գործ դնելով, զանազան գրգռիչ
միջոցներով ամբողջ զիշերներ անցկացնել առանց
քնելու:

Այդ տեսակէտից կանայք զարմանալի օրինակ-
ներ են տալիս, որքան անքուն է մնում հոգա-
տար մայրը կամ սիրող ամուսինը իր մերձաւորի
հիւանդութեան ժամանակ:

Բայց դա այսպէս ասած կամովին անքնու-
թիւն է, իսկ բացարձակ անքնութիւն չկալ կամ
չափազանց հազւագիւտ է լինում:

Երբեմն հիւանդները գանգատում են, թէ
ամբողջ զիշերը աչք չեն կպցըել: Բայց այդ գան-
գատը բառացի կերպով չպէտք է հասկանալ, որով-
հետեւ նա հիմնուած է ինքախարէութեան վրայ,

Եթէ մենք ուշի ուշով դիտենք, եթէ մեզ հարց
տանք, թէ ինչով ենք անցկացրել բազմաթիւ ան-
քուն ժամերը, այն ժամանակ ստիպուած կլինենք
խոստովանել, որ մենք գոնէ զիշերուալ մի մասը
քնով ենք անցկացրել:

Յայտնի է թէ որքան դանդաղ է անցնում

ժամանակը նոյն իսկ ցերեկը, երբ պարապմունք
չկայ, երբ «սպասողական դրութեան» մէջ ենք:

Այդ գանդաղութիւնը աւելի սաստկանում է
գիշերը, երբ նոյն իսկ տեսողութեան ու լսելիքի
տպաւորութիւններ չեն լինում:

Որ անքնութիւնը միշտ չափաղանցացրած
ծեռվ են պատկերացնում—այդ մասին վկայել կա-
րող են գտնգատուող հիւանդների վրայ հակող բը-
ժիշկներն ու հիւանդապահները:

Ճիշտ է այդ տեսակ հիւանդները երբեմն յայտ-
նում են, թէ շարունակ լսել են ժամացոյցի զարկը,
բայց դա ինքնախաբէութիւն է: Գուցէ նրանք
իսկապէս մի քանի անգամ լսել են այդ ձայնը,
որովհետեւ արթուն են եղել, բայց հաւանականո-
րէն շատ անգամ էլ չեն լսել...

Երբեմն քունը ընդհատում է մի կամ մի քա-
նի ժամով, իսկ երբեմն էլ միայն մի քանի քոպէով:
Բայց երկու դէպքումն էլ մարդու առողջութիւնը
վնասուում է:

Կանոնաւոր չը քնող մարդը միշտ առաւօտները
վեր է կենում շարզուած, յոդնած և աշխատանքի
անքնդունակ: Նա ամենայն իրաւամբ կարող է
գտնգատուել իր դրութիւնից:

Անքնութիւնը բաւական տարածուած տան-
չանք է մանաւանդ մեր յնեարդարին դարում:

Նա իսկապէս հիւանդութիւն չէ, այլ հիւան-

դութեան մի նշանը: Բայց այդ նշանը կարող է
առաջացնել բազմազան հիւանդութիւններ:

Հասկանալի է ուրեմն, թէ որքան վնասակար
է, երբ մարդիկ ծխելով կամ մի այլ վատ սովորու-
թեամբ աւելի նպաստում են այդպիսի դրութեան:

ԺԱ.

Հարկաւոր է աչքի առաջ ունենալ նաև այն
կարեոր հանգամանքը, որ շատ մարդկանց անքնու-
թեան պատճառը ցերեկուայ քունն է լինում:

Անմիշապէս ճաշից յետոյ քնելու սովորու-
թիւնը չի կարող օգտակար համարուել, որովհետեւ
նա խանգարում է մարսողութեան կանոնաւորու-
թիւնը, առաջացնում է ծանրութիւն ստամոքսում,
անհամութիւն բերանում, իսկ երբեմն անքնու-
թիւն կամ անհանգիստ քուն:

Հարկաւոր է ձեռք վերցնել այդպիսի սովո-
րութիւնից, իսկ եթէ անհրաժեշտութիւն կայ, կա-
րելի է քնել ճաշից առաջ:

Առհասարակ չափաղանց վնասակար է երե-
կոյեան քնելուց առաջ կուշտ ուտելը: Դժբաղդա-
բար ժամանակակից հասարակութեան մէջ չափա-
ղանց տարածուած է այդ սովորութիւնը: Պէտք
է դրա առաջն առնել...

Գիտութեան փորձերը յոլց են տալիս, որ

բնած ժամանակ ստամոքսի գործունէութիւնը զգալի չափով թուղանում է:

Կերակուրը մնում է ստամոքսում կամ կիսամարս կամ բոլորովին չմարսուած և այդպիսով առաջացնում է մարսողութեան գործարանների ցաւեր և դրա հետ միասին անհանդիստ բռն:

Պակաս նշանակութիւն չունի և այն հանդամանքը, թէ անքնութիւնից տանչւող անհատը ինչպէս է անցկացնում երեկոյեան:

Եթէ նրանք երեկոները նստում են հիւրանոցներում ու կուբիներում և շնչում են այդ տեղերի ծխոս օվը, եթէ թուղթ են խաղում, ծխում են, վիճաբանում, գրգռում են, այն ժամանակ բոլորովին զարմանալի չէ, որ զիշերը չպիտի կարողանան հանդիստ քնել, որ առաւտները պիտի վերկենան յոդնած ու չարդուած:

Հարկաւոր է հեռու մնալ այլպիսի պայմաններից:

Առանձին ուշադրութիւն պիտի դարձնել նրնչարանների վրայ:

Դժբաղվաբար մեղանում անուշագիր են թողնում այդ հանդամանքը: Առողջապահական կանոնների դէմ մեղանչում են ոչ միայն չքաւորներն ու տպէանները, այլև հարուստ ու ինտելիգենտ մարդիկ:

Դադարկ փառասիրութեան բաւականութիւն տալու համար տան ամենալաւ, ամենալոյս սե-

նեակները դարձնում են զակլին - ընդունարան, իսկ ամենավատ, փոքր ու մութ սենեակները — ննչարան:

Ննչարանը պէտք է ունենալ ոչ չափազանց պայծառ լուսաւորութիւն և ոչ էլ բարձր տաքութիւն: Հարկաւոր է խնամք տանել, որ ննչարանում և նրա հարևան սենեակներում կատարեալ խաղաղութիւն լինի:

Մահնակալը պէտք է պատից $\frac{1}{4}$ կամ $\frac{1}{2}$ արշին հեռու լինի, իսկ զօշակը — սլքութիւնով:

Հարկաւոր է խոյս տալ միւնոյն մահնակալի վրայ երկու հոգով բնելուց:

ԺԲ.

Պարզ է, որ անքնութիւնը կարող է առաջ գալ զանազան պատճառներից:

Այդ պատճառները կարելի է բաժանել երեք կարգի: I կարգին պատկանում են հոգեկան և ուղեղային պատճառները, II-ին նեարդային համակարգութիւնից կախում ունեցող պատճառները, III-ին թունային պատճառները, երբ օրդանիղմը վարակուած է լինում զանազան թուներով:

Ամենքին յայտնի է, որ հոգեկան զրութիւնը շատ մեծ ազդեցութիւն ունի քնի վրայ:

Մեղանից ամեն մէկը անձնական փորձից դիտէ, թէ որքան դժուար է բնելը, երբ մարդ վրը-

դովուած է, վշտացած է կամ ծանր մտատանչութեան մէջ է: Ոճրագործը միայն զիշերներն է քը-նում կամ բոլորվին չի քնում:

Հանգիստ քնելու համար անհրաժեշտ է հոգե-կան հաւասարակշռութիւն: Հակառակ դէպքում առաջ է գալիս անքնութիւն:

Այդ միենոյն ծեռվ անքնութիւն է առաջ բե-րում և ծալրահեղ աղքատութիւնը՝ մտաւոր կամ ֆիզիկական:

Անքնութիւն առաջացնող պատճառները շատ անգամ առաջացնում են նաև շախտ—նելրաստե-նի և ուրիշ հիւանդութիւններ: Այդ դէպքում ան-քնութիւնը լինելու է ծանր ու բարդ:

Իսկ այդ բոլոր տանշանքների վերջաբանը լի-նում է խելագարութիւնը, եթէ անհատը որոշ տրա-մադրութիւն ունի դէպի այդ բանը:

Խելագարութեան նախագուշակ նշան կազմում է աւելի յամառ ու երկարատե անքնութիւնը:

Սխալ կ'լինի կարծել, թէ անքնութիւնն է խելագարութեան անմիջական պատճառը:

Ընդհակառակը ուղեղի մէջ կատարւող հի-ւանդու փոփոխութիւնները, որոնց վերջնական հետեւանքը խելագարութիւնն է լինում, խանգա-րում են հոգեկան ներդաշնակութեան և դրանով անքնութեան պատճառ դառնում:

Ինչ էլ որ լինի, յամառ ու երկարատե ան-

քնութիւնը չափազանց վտանգաւոր հիւանդու-թիւն է:

Այդ միենոյն կարգին են պատկանում նաև ուղեղի հիւանդութիւնները, օրինակ ուղեղի փափ-կանալը, պրօգրեսսիւ կաթուածը, ուռուցը և ալն:

Ծերունիներից շատերը տանշւում են անքնու-թիւնից՝ դրա պատճառը, հաւանականօրէն, „սկլե-րոզ“ կոչուող հիւանդութիւնն է, երբ ուղեղի զար-կերակները գնդանում են և դրանով դժուարաց-նում ուղեղի սննդառութիւնը:

Վերոյիշեալ պատճառներից առաջ եկած ան-քնութիւնը բժշկելու համար անհրաժեշտ է ամե-նազլխաւոր ուշադրութիւնը դարձնել հիմնական պատճառի վրայ: Օրինակ, ուղեղի ուռուցները յա-ճախ սիֆիլիսից են առաջ գալիս, ուստի պէտք է բժշկել նախ և առաջ սիֆիլիսը: Այդ դէպքում եօդալին կալին և սնդիկը փորձառու բժշկի ձեռ-քում հրաշքներ կարող են գործել:

Երկրորդ կարգի պատճառների թւում զլխա-ւոր տեղը բռնում են նեարդային համակարգու-թեան շրջանակալին կամ մակերեսովթալին հիւան-դութիւնները:

Ամենից առաջ պէտք է լիշել յցաւոցը: Ինչից էլ որ առաջ գալ յցաւոցը—ատամից, ուռած մատից, ալրուած անդամից, մի որևէ ներ-

քին անդամից—այդ միւսովն է. նա միշտ էլ կրտ-
րում է մարդու ըռունը:

Այդ տեսակէտից իւրաքանչիւր անհատ իր
անձնական դառը փորձն ունի:

Վերջապէս երրորդ կարգին պատկանում է
թունաւորութիւնից առաջացած անքնութիւնը:

Մարդու օրդանիզմի մէջ գոյանում են բազմա-
տեսակ թոյներ: Դրանք կերակրի հետ մանում են
ստամքը և յետոյ իրեւ անպէտք և վնասակար
նիւթ դուրս թափւում:

Սակայն այդ զտումը կամ ուրիշ խօսքով
ասած՝ ասսենիզացեան կապուած է շատ բարդ
պայմանների հետ, որոնց համար անհրաժեշտ է
բազմաթիւ գործարանների կանոնաւոր գործունէ-
ութիւն:

Եթր խանդարւում է այդ կանոնաւորութիւնը,
այն ժամանակ թունալի նիւթերը մնում են օր-
դանիզմի մէջ և արեան հետ խառնուելով, գնում
փարակում են մարմնի անդամները, որոնց թւուժ
և ուղեղը:

Այդ թոյները անվնաս դարձնող օրդաններից
ամենազլիսաւորներն են՝ լեարդ և երիկամունքը:

Պարզ է ուրեմն, որ երբ լեարդը կամ երի-
կամունքը հիւանդու են և չեն կարողանում իրանց
գերը կատարել, այն ժամանակ թոյները մնում են
մեր օրդանիզմի մէջ և փարակում նրան:

Այդ երկութը աւելի վնասակար է դառնում
երբ մէնք գործ ենք ամում թունալի նիւթեր, օրի-
նակ, մէծ բանակութեամբ թէյ, սուրճ և մանա-
ւանդ ոգելից ըմպելիներ, որոնք սաստիկ զրգուում
են մեր նեարդալին համակարգութիւնը և զրանով
անքնութիւն առաջ բերում:

Անքնութիւնը սաստիկ է լինում մանաւանդ
այսպէս ասած՝ սպիտակ տենդի—արբեցողական
խելագարութեան (բէլաեա գորեաչկա) ժամանակ:

Այդ հիւանդութիւնը առաջ է գալիս ոգելից
ըմպելիների չափազանց գործածութիւնից:

Թունալին պատճառաներից անքնութիւն առաջ
է գալիս նաև սուր—տարափոխիկ հիւանդութիւն-
ների ժամանակ, ինչպէս օրինակ՝ ստամոքսալին
փարցաւը:

Միկրոբները, մտնելով մեր օրդանիզմի մէջ,
պատրաստում են մի առանձին նիւթ—»տօկսին«,
որը թունաւորում է արիւնը և նրա միջոցով մարմ-
նի զանազան մասերը՝ մանաւանդ նեարդալին հա-
մակարգութիւնը:

Վերոլիշեալից արգէն պարզ երկում է, թէ
որքան բազմազան, որքան բարդ են անքնութիւն
առաջացնող պատճառները:

ԺԳ.

Երբեմն Երեխաներն էլ են տաճչում անքնութիւնից: Շատ երեխաներ աչքի են ընկնում սանձարձակութեամբ ու նմանուելու հակումով: Ամեն մի նոր և անսպասելի զգացմունք առաջացնում է նրանց մէջ այսպէս ասած՝ անդրադարձ գործողութիւններ՝ ճիչ, լայ, ծիծաղ, չղածզութիւններ և այլն:

Երեխան իր գիւրազգացութեան ու սուր լիշողութեան շնորհիւ շուտ է ենթարկում շրջապատողների աղեցութեան: Դրեթէ նրա բոլոր գործողութիւնները իրանց վրայ կրում են նմանուելու դրոշմք:

Մէծերի վրայ ահ ու սարսափ աղբող պատճառները աւելի խոր հետքեր են թողնում երեխաների մէջ, աւելի խիստ աղեցութիւն են ունենում: Հէնց այդ պատճառով էլ հարկաւոր է առանձին զգուշութիւն երեխաների վերաբերմամբ:

Դրանց թէ քունը և թէ արթուն դրութիւնը տարբերում է հասակաւորների նոյնանման զրութիւնից:

Երեխաները, ինչպէս ասեցինք վերեում, աւելի խոր, աւելի երկար են քնում, քան թէ հասակաւորները:

Դա առաջ է գալիս ի միջի ալոց նրանից, որ

Երեխալի զիտակցութիւնն աւելի թոյլ է լինում, աւելի շուտ է լոգնում, ուստի և աւելի երկար հանգիստ է պահանջում:

Երեխաների անքնութիւնը զանազան աստիճաններ է ունենում: Բայց բարեբաղդաբար շատ քիչ է պատահում, որ նրանք ամբողջ օրերով անքուն մնան:

Նրանց քունը անհանգիստ է լինում, նրանք ըստ երեսյթին առանց մի որևէ պատճառի զարթնում են, շուռ են գալիս այս ու այն կողմ, զառանցում են, լայ են լինում, ճշում են և այն և այլն:

Այդպիսի քունը վնասակար է, որովհետև խանգարում է մարսողութեան և մարմնի զանազան գործողութիւններին:

Բոլորովին անքուն կամ անհանգիստ քնով անցկացրած զիշերը չի կարող թարմացնել, վերականգնեցնել երեխալի ոչժերը:

Հէնց այդ պատճառով էլ նա դառնում է կամ չարդուած ու դիւրազրգիւ կամ թոյլ ու անտարբեր:

Երեխաների անքնութեան կամ անհանգիստ քնի պատճառներ չափազանց բազմազան են և շատ անզամ գժուար է լինում նրանց որոշելը:

Առհասարակ մանկանոցի կեղտոտ ու տաք օկր, չափազանց հաստ ու նեղ հագուստը, մարմնի անյարմար գրութիւնը, օրգանիզմի զանազան հիւան-

գութիւններն ու տանշանքները — այդ բոլորը դարձնում են երեխալի քունը կարծ ու անհանդիստ:

Հարկաւոր է միշտ աչքի առաջ ունենալ, որ երեխալի նեարդային համակարգութիւնը չափանց դիւրաղգաց է, ուստի վնասակար է նրանց քնից առաջ բարկացնելը:

Եթէ երեխանները քնելուց առաջ չարութիւն են անում, վազվառմ են, այն ժամանակ նրանք իսկոյն չեն կարողանալ քնել կամ անհանդիստ քուն կունենան, քնի մէջ կ'խօսեն, վեր կ'թռչեն և ալին:

Աստամ հանելիս էլ նրանք վատ են քնում: Դրա պատճառը ոչ այնքան ցաւն է, որքան արեան առատ հոսանքը դէպի ուղեղը:

Երբեմն երեխանների անքնութեան հիմքը նոր սկսող մի որևէ հիւանդութիւն է լինում. օրինակ ուղեղի, նրա թաղանթի հիւանդութիւնները, որոնց ժամանակ արիւնը առատութեամբ հոսում է դէպի ուղեղը և դրանով էլ անքնութիւն առաջացնում:

Այլպիսի հիւանդութիւններ ունենում են մէջ մասամբ արբեցողների ժառանդները:

ԺԴ.

Շատ մէջ նշանակութիւն ունի երեխալի մարմնի դիրքը մահճակալի վրայ:

Բարձր բարձր երեխալի համար օդտակար չէ,

որովհետեւ ճնշում է նրա շնչափողը և գժուարացնում շնչառութիւնը: Այդ դէպի ուղարձնում երեխան խրովածփացնում է, որ լաւ չէ: Բացի դրանից, երբ զորւխը բարձր դիրք է ունենում, այն ժամանակ քիչ արիւն է ստանում, որով և սաստկանում է ուղեղի սակաւարիւնութիւնը:

Բացի դրանից երեխալի զլուխը շուտ-շուտ վայր է ընկնում բարձրից և նրան անհանդստութիւն պատճառում:

Դրա առաջն առնելու համար ամենախելացի միջոցն է ։ Փափուկ, լայն ու տափակ բարձրածելը:

Հարկաւոր է խնամք տանել, որ քնած երեխան շուտ-շուտ փոխէ իր դիրքը:

Մէջքի վրայ պառկելը լաւ չէ, որովհետեւ կերած կերակուրը կարող է մի որևէ պատճառով յետ տալ և շնչարդելութիւն առաջացնել:

Փորի վրայ պառկելն էլ վտանգաւոր է, որովհետեւ փոքրիկ երեխանները կարող են երեսները թաղել բարձրի մէջ և զլուխներ շարժել չկարողանալով, խեղդուել:

Շատ երեխաններ բերանից շունչ քաշելու վատ սովորութիւն ունին: Բայց ի հարկէ չկայ գործողութիւն առանց պատճառի, ուստի այդ երեսիթն էլ ունի իր պատճառը: Երեխան բերանիցն է շնչում, որովհետեւ նրա քիթը լիքն է լինում:

Այդ բանում մեղաւորը քրոնիկական հարբուխն
է, որի վրայ սովորաբար շատ քիչ ուշադրութիւն
են դարձնում: Բացի դրանից կան նաև ուրիշ պատ-
ճառներ՝ կոկորդի (ՅԵՅԵ) նշան գեղձերի ուսուցը,
քթի միջի ուսուցները և այլն, դրանք յաճախ ան-
քնութիւն են առաջացնում:

Անհրաժեշտ է բժշկի խորհրդին դիմել և եթէ
նա նպատկայարմար համարէ, անդամահատու-
թիւն-օպերացիա կատարել: Մի վախենար անդա-
մահատութիւնից, նրա միջոցով կը բժշկես երեխայիդ:

Հարկաւոր է առանց արհեստական միջոցների
երեխային շուտ քնել սովորեցնել: Օրորելը, շփելը,
կրծքին թփթփացնելը, հեքեաթներ պատմելը և
այլ նմանօրինակ միջոցները վնասակար են:

Եթէ մենք երեխային երես չտանք, եթէ չը
քաշալերենք նրա վատ սովորութիւնները, նա ան-
կողին մտնելուն պէս կընի:

Երեխայի ննջարանում վառած մոմ թողնելը
կամ մօար նստելը նոյնպէս վնասակար է, որով-
հետեւ նպաստում է նրա վախկոտութեան:

Առաւոտ, երբ երեխան զարթնում է, պէտք
է պահանջել, որ նա իսկոյն վեր կենալ և արագ
հագնուի:

Անկողնի մէջ երկար ժամանակ անքուն պառ-
կելը վնասակար է, որովհետեւ զարգացնում է երե-

խաների մի քանի վատ սովորութիւնները, օրինակ՝
մարմնաշարժութիւն և այլն:

Ժողովրդի մէջ տարածուած է այն կարծիքը,
թէ երեխայի շատ քնելը առողջութեան նշան է:

Բայց դա սխալ է. ամեն ինչ ունի իր սահ-
մանը, ուստի չափից դուրս երկար քնելն էլ օդտա-
կար չի կարող համարուել:

Երկար քնելը վնասում է մարդու առողջու-
թեան, բթացնում է արտաքին աշխարհից տպա-
ւորութիւններ ստանալու ընդունակութիւնը և այլն:

Որքան շատ տպաւորութիւններ ենք ստանում,
նոյնքան զարգացած է լինում մեր գիտակցութիւնը:
Հակառակ դէպքում գիտակցութիւնը բթանում է
և նրա հետ միասին թուլանում են հոգեկան ըն-
դունակութիւնները:

Բացի դրանից երկար քնող մարդիկ ֆիղիկա-
պէս էլ լաւ չեն զարգանում. նրանց ոյժերը թու-
լանում են և ամբողչ օրգանիզմի սննդառութիւնը
խանգարում է:

Կլորիկ թշերը, կաշիկ տակի հաստ հարպը
միայն խարուսիկ նշաններ են առողջապահական
տեսակէտից: Իսկապէս երկար քնող երեխանները
չեն կարող առողջ համարուել:

Այդպիսի երեխանները յաճախ ունենում են
արեան սակաւութիւն, խիստ փորկապութիւն և
դրանց հետ կապուած բազմաթիւ տանչանքներ:

Չափազանց վնասակար է, երբ ծնողները և դաստիարակները երեխաներին ստիպում են օրգանիզմի պահանջաձից աւելի քննու:

Երկարատև և ստիպողական քունը թուլացնում է երեխաների զիտակցութիւնը, հոգեկան լնդունակութիւնները և այդպիսով պակասեցնում է նրանց եռանդն ու կենսունակութիւնը...

ԺԵ.

ՄԵՆՔ համառօտ կերպով բացատրեցինք անքնութեան պատճառներն ու հետևանքները: Այժմ մնում է մի քանի խօսք ասել նրա բժշկութեան մասին:

Ինչպէս պէտք է կռուել այդ վտանգաւոր թշնամու դէմ:

Հոգեկան և ֆիզիկական դաստիարակութիւնը թէ տանը և թէ դպրոցում ամեն կերպ պիտի ծգտի երեխաների միջից արմատախիլ անելու այսպէս ասած նեարդարին հակումներն ու նախատրամադրութիւնը:

Դպրոցի ու ծնողների աղղեցութիւնից աղատուած պատճանին և հասակաւոր մարդը կարող էն անքնութեան առաջն առնել, եթէ կանոնաւոր կեանք վարեն, ալսինքն եթէ հեռու մնան չափից դուրս ծխելուց, ուժասպառ լինելուց, դիշերացին

գլարճութիւններից, արբեցողութիւնից և սեռական չափազանցութիւններից: Բացի դրանից հարկաւոր է ուշը դարձնել կանոնաւոր սննդառութեան վրայ:

Անքնութիւնը բժշկելը որբան շուտ սկսվի, նոյնքան աջող հետևանքներ կունենայ:

Երկար գոյութիւն ունեցող անքնութիւնը երբեմն մեծ դժուարութեամբ է բժշկում և վաս հետևանքներ է ունենում:

Կրկնում ենք, անքնութեան առաջն առնելու համար հարկաւոր է բժշկել նրա հիմնական պատճառը:

Ճիշտ է, զիտութիւնը կարող է զանազան միջոցներով վերադարձնել կորցրած քունը, բայց երկար չի տեսում այդպիսի դրութիւնը: Այդ միջոցների աղղեցութիւնը լնդհատուելուն պէս անքնութիւնը նորից կ'սկսուի:

Կարծում ենք անհնարին ու նոյնիսկ անյարմար է այստեղ լիշել այն բոլոր միջոցները, որոնցով կարելի է անքնութիւնը բժշկել: Իւրաքանչիւր անգամին մասնագէտ բժիշկն ինքը պիտի քննէ հիւանդի օրգանիզմը, անքնութիւն առաջացնող պատճառները և այդ բոլորի համեմատ որոշէ բուժիչ միջոցները:

Օրինակ, երբեմն անքնութեան առաջն առնել կարող են երկարատև ֆիզիկական վարժութիւն-

ները, որոնց բուն նպատակն է ուժասպառութիւն
առաջ բերելը: Երբեմն էլ ընդհակառակը ուժաս-
պառութիւնը ուժեղացնում է անքնութիւնը:

Սակայն բոլոր դէպքերումն էլ հարկաւոր է
քնից մի քանի ժամ առաջ ընդհատել աշխատանքը
և հանգստանալ:

Ցերեկուայ զբօսանքները լաւ ազդեցութիւն
և ունենում, իսկ գիշերային զբօսանքները սովո-
րաբար վատ են աղդում:

Այդ միւնոյնը կարելի է ասել և մտաւոր զբաղ-
մունքների վերաբերմամբ: Երեկոյեան ընթերցա-
նութիւնը, խօսակցութիւնն ու գւարճութիւնները
վատ են աղդում քնի վրայ:

Որքան մեղմ ու աստիճանաբար կատարուեն
մեր ներքին ու արտաքին կեանքի փոփոխութիւն-
ները, այսինքն ցերեկուայ աղմկալի զբաղմունքնե-
րից գիշերային հանգստութեան անցնելը, այնքան
հանգիստ կ'լինի քունը:

Բայց անքնութեան ծանր դէպքերում միայն
զբաղմունքների և առհասարակ կենցաղի կանոնա-
ւորութեամբ չի կարելի բժշկուել:

Հարկաւոր են նաև ուրիշ միջոցներ—էլեկտրա-
կանութիւն և ջրաբուժութիւն, բայց դա ար-
դէն բժշկի գործն է:

Սառը և տաք չուրը զանազան ձեւերով—(լուա-
ցուել, տրորել, սրսկել և ալլն) դորժ է ամւում

առհասարակ նեարդային հիւանդութիւններ և մաս-
նաւորապէս անքնութիւնը բժշկելու համար:

Անքնութիւնը բժշկելու հարցում շատ մեծ
դեր է խաղում նաև կլիմայի փոփոխութիւնը: Գիւ-
ղում, անտառում, լեռներում, ծովի ափում ապրելը
բարերար ազգեցութիւն է ունենում: Իսկ մեծ ա-
մառանոցներ դնալու համար պէտք է հարցնել
բժշկի խորհուրդը:

Բոլոր դէպքերումն էլ հիւանդի վրայ հիպնո-
սի նման աղդում է ոչ միայն թարմ օդը, այլ նաև
խաղաղ կեանքը, ընտանեկան հանգամանքներից ու
սովորական աշխատանքներից հեռանալը:

ԺԶ.

Այժմ գառնանք երազներին, տեսնենք թէ
ի՞նչ է երազը...

Դժբաղդաբար անմահ գիտութիւնը դեռ չէ
արտասանել իր վերջին խօսքը՝ այդ հարցի մասին,
թէև բաւական փաստեր կան հաւաքուած:

Մեր ժողովուրդը շատ սխալ կարծիքներ ու-
նի երազի մասին, կարծիքներ, որոնք հիմնուած
են սնոտիապաշտութեան վրայ: Մեր պառաւ տա-
տերն ու պատերը միշտ խորհրդաւոր կերպով են
բացարում երազները, միշտ հրաշքներ ու դուշա-
կութիւններ՝ են որոնում նրանց մէջ...

Բայց մեղաւոր չէ ժողովուրդը, որովհետեւ նա
զուրկ է փրկարար լուսից, զուրկ է զիտութիւնից:
Իսկ առանց զիտութեան ու զարդացման նա ի՞նչ
կարող է հասկանալ...

Դիտութեան միակ առաջնորդը խելքն է,
առողջ դատողութիւնն է, ուսումնասիրութիւնն ու
վերլուծումն է:

Դիտութիւնը ոչ մի բանի չի հաւատում, այլ
անձամբ քննում է, ուսումնասիրում է փաստը,
չափում—ձեռում է, վերաստուգում է և ապա նոր
դուրս է բերում իր եղբակացութիւնը:

Հոգով ու սրտով հաւատա՛ զիտութեան, նա
փրկարար ոյժ ունի...

Վերեռում մենք արդէն տեսանք, թէ քունը
մարդու համար որբան մեծ նշանակութիւն ունի,
առանց քնի մարդը չի կարող ապրել...

Իդուր չէ, որ նոյն իսկ ժողովրդական առած-
ների ու երդերի մէջ քունը գովաբանում է իրեւ
մի անդնահատելի դանձ, որ հօրից ու մօրից էլ
սիրելի է, որ ամենալաւ տեղից էլ բարձր է:

Քնի ամենանշանաւոր և ամենաբնորոշ յատ-
կութիւնը անուրջներն ու երազներն են:

Երազ—դա մի ամբողջ աշխարհն է, հրաշալի
ու բազմազան տեսարանների, ծալների ու գոյնե-
րի աշխարհ...

Երազում մարդ տեսնում է այնպիսի երեսիթ-

ներ, այնպիսի երեակալական դէպքեր, որոնց մա-
սին արթուն ժամանակ երեակալել անգամ չէր
կարող...

Մի ակնթարթում աղքատը դառնում է հա-
րուստ, իսկ նրա խրճիթը—մի շքեղ պալատ: Զա-
ռամած ծերուկը դառնում է երիտասարդ, տգեղ
պառաւը—հրաշալի գեղեցկուհի, առողջը—հիւանդ,
հիւանդը—առողջ և այլն և այլն:

Երազում մարդիկ աննկարագրելի արագու-
թեամբ թուզում—անցնում են տասնեակ հազարա-
ւոր վերստեր, տեսնում են նոր երկիրներ ու քա-
ղաքներ, անհաւասալի գործեր են կատարում: Նր-
քանց համար կարծես գոյութիւն չունի ոչ մի օրէնք,
ոչ մի արգելք, ոչ տարածութիւն, ոչ ժամանակ,
ոչ պատճառ և ոչ հետեւանք: Ամէն ինչ հնարաւոր
է, ամեն ինչ—հեշտ:

Բայց, արգեօք, իսկապէս այդպէս է:

Այդպիսի հրաշներով լի և հերիաթանձան
երազների պատճառն այն է, որ քնած ժամանակ
մեր կամքի ու զիտակյութեան ոլժը թուլանում
է: Երեակալութիւնը, գրանց հսկողութիւնից ազա-
տուելով, սկսում է ինքնուրոյն կերպով գործել, մի-
միայն մեր պահանջներին ենթարկուել:

Այդ դէպքում վառ երեակալութեան համար
բաւական է ծի չնչին պատճառ, որպէսզի նա
ստեղծէ չափազանց բարդ ու հրաշալի պատկերներ,

որպէսզի առաջացնել բաղմաղան դէպէկը ու երեւոյթներ...

Դիմենք օրինակներին...

—Մի բանտարկեալ պատմում է, որ երբ նա նստած էր բանտում և մեռնում էր սովից, ամեն զիշեր երազում տեսնում էր ճոխ սեղան բաղմաթիւ կերակուրներով ծածկուած, բայց հէնց որ մօտենում էր ուտելու, կախարդական սեղանն իսկոյն անհետանում էր և նա զարթնում էր ստամոքսի խիստ ցաւերից...

—Մի մարդ երազում տեսնում է, որ ինքը ձմեռն անց է կացնում հեռաւոր հիւսիսում և տանջում է սաստիկ ցրտից... նա զարթնում և ի՞նչ է տեսնում: Վերմակը վար է ընկել և նա իսկապէս ցուրտ է զգում...

—Ես հիւանդ պառկած էի սենեակումս, պատմում է մի ֆրանսիացի զիտնական, յանկարծ տեսնում եմ ինչ որ տարօրինակ դէմքեր, վիճում եմ նրանց հետ, մարդասպանութեան ականատես եմ լինում... բայց ահա ինձ դատապարտում են մահուան, ժողովրդի խոռոն բաղմութեան ուղեկցութեամբ ինձ տանում են հրապարակ, բարձրացնում են կառափնարանի վրայ, դահինը կտրում է զրլուխս... Ես զգում եմ, թէ ինչպէս զլուխս բաժանում է մարմնից և հէնց այդ բոպէին վեր եմ թռչում, քնից զարթնում եմ...

Եւ ի՞նչ...

Բանից դուրս եկաւ, որ այդ սարսափելի երաղի պատճառը երկաթէ փոքրիկ ամանն էր, որ ընկել էր վղիս և իր սուր ծալըովը սեղմել նրան...

Իւրաքանչիւր մարդ բաղմաթիւ ու բաղման երազներ է տեսնում:

Հասկանալի է, որ ամեն մի երաղի լուրջ նշակութիւն առիլքութիւն է:

Երազներին հաւատալլը, նրանց գուշակութիւններից վախենալլը նոյնքան անմիտ բան է, որքան և քամու յետեկից վազելլը:

Երազներին հաւատացողը, իրաւացի կերպով ասում է հսկեոր հալրերից մէկը, նման է այն մարդուն, որ ուզում է զրկել իր ստուերը կամ քամու յետեկից է ընկնում...

Ճէ.

Այնուամենայնիւ երազներն ունին իրանց պատճառն ու նշանակութիւնը:

Երբ ստամոքսը լիբն է կերակրով, երբ մարսողութիւնը զանդաղանում ու գժուարանում է, երբ մարմինը անկանոն զիրը է ընդունում և զրանով արեան շրջանառութիւնն ու շնչառութիւնը ժանրացնում, այն ժամանակ յանախ առաջ է գալիս մղձաւանց — կօշմար: Մարդու աչքին երեսը

Են վտանգ, սպանութիւն, բռնութիւն, կարծես
մէկը նրան սեղմում է, խեղդել է ուզում:

Ալդպիսի դէպքերում սնոտիապաշտ մարդիկ
ասում են, թէ չար ողիներն են այդ բանն անողը...

Բայց որքան ծիծաղելի է այդ կարծիքը:

Մեր երազները որքան էլ դատարկ ու անձիտ
լինին, այնուամենայնիւ ունին որոշ պատճառ, հիմք,
ուստի և կարող են ուսումնասիրութեան ու բա-
ցարութեան առարկալ գառնալ:

Դեռ շատ հին ժամանակներում զոյութիւն
է ստացել երազներ բացատրելու արհեստը:

Սնկասկած զրա հետ պատճական կապ ունին
այժմեան «երազահանները», որոնք այնքան տա-
րածուած են ագէտ ժողովրդի մէջ և նպաստում
են նրա սնոտիապաշտութեան:

Ամօթ այն մարդկանց, որոնք օգտառում են
ժողովրդի թուլ կողմից և շահասիրական նպատակ-
ներով տարածում են «երազահանները»...

Բարեխիզն կերպով ուսումնասիրելով երազ-
ների պատճառն ու շարժառիթը, կարելի է շատ
խրատական, հետաքրքիր փաստեր դուրս բերել:

Երազի ժամանակ մարդկալին երեակալու-
թիւնը գործում է անդադար ու անսահման, նա
իր տարօրինակ լեզով պատճում է մարմնի առող-
ջութեան մասին, ցոյց է տալիս օրդանիզմի մէջ
կատարւող փոփոխութիւնները, դեռ ևս չնկա-

առւած մահացու հիւանդութիւնը, պատմում է
ապադայ աջողութեան, լոյսերի, կրքերի, լոյզերի
մասին և այլն:

Երազներն ու անուշները մեր արթուն կեան-
քի արծագանքն են կազմում:

Խորը ճշմարտութիւն է պարունակում իր մէջ
այն առածքը, թէ «քաղցածը երազում մածուն տե-
սաւ, բայց գդալ չ'գտաւ»:

Արթուն ժամանակ ի՞նչի մասին որ մտածում,
հոգում ենք, ինչ որ զդում ենք, ինչից որ տանշ-
ուում ենք, նոյնը զանազան ձեւերով երեսում է
երազում:

Դրանից կարելի է եղրակացնել, որ երազները
բարոյական-կրթական մեծ նշանակութիւն ունին:
Նրանք մի լաւ միջոց են կազմում մեր թերու-
թիւններն ու արժանիքները ցոյց տալու համար:

Արթուն ժամանակ մենք միշտ աշխատում
ենք իսկականից լաւ երեալ:

Ո՞ւմ համար զուրեկան է անձնական թերու-
թիւններն ու արատները խոստովանել...

Բայց քնած ժամանակ—երազում ալդպիսի
ինքնախարէութիւնն անհնարին է:

Գիշերալին երազներում, ինչպէս հայելու մէջ,
անդրադառնում է մարդկալին հոգին իր ամբողջու-
թեամբ, իր բոլոր մտածմունքներով, լաւ ու վատ

կողմէրով... Այդ ժամանակ երեսւմ է նրա ամբողջ բարոյական պատկերը:

Տռփոտ մարդը սեռական զգացմունքների ու բաւականութիւնների մասին է երազում. Ժլատը—իր թագցրած փողերի մասին. ոճրագործը—արեան, դատարանի ու բանտի մասին:

Հին ժամանակուայ մի բռնակալ թագաւորի թիկնապահ պատմում է, որ երազում սպանել է իր տիրոջը:

Դու այդպիսի երազներ չեիր կարող տեսնել, եթէ արթուն ժամանակդ մտածած չ'լինէիր այդ մասին, բացականչում է թագաւորը և թիկնապահին սպանելու հրաման տալիս:

Ով որ կրօնական հարցերի մասին է մտածում, նրա երազներն էլ մեծ մասամբ կրօնական բովանդակութիւն են ունենում:

Ուշադրութեան արժանի է այն փաստը, որ պետական գործիչներից, գիտնականներից, հեղինակներից.—գեղարուեստագէտներից շատերը երբեմն երազում գտել են այդ հարցերի լուծումը, որոնց մասին երկար մտածել ու չարչարուել են արթուն ժոմանակ:



ԺԼ.

Երազը քնի մի տեսակն է:
Ինչպէս յատնի է, երազները պատահում են մեծ մասամբ քնի սկզբում կամ զարթնելուց քիչ առաջ:

Գլխի ուղեղի գործունէութիւնն այդ ժամանակ թուլանում—նուազում է և հէնց այդ պատճառով էլ առաջ են զալիս երազները:

Երազի էութիւնը կայանում է նրանում, որ ուղեղը գոյացնում է զանազան պատկերներ, որոնց մասին զարթնելուց յետոյ յիշում ենք՝ պարզ կամ աղօտ կերպով:

Երբեմն երազում մենք տեսնում ենք իրար հետ կապուած գործողութիւններ, լսում ենք, զգում ենք, իսկ երբեմն էլ խօսում ենք, շարադրում ենք:

Բայց այս էլ պէտք է ասել, որ լինում են գէպըեր, երբ այդ երկու տեսակն էլ միասին են պատահում:

Երազում երևացած պատկերները չափաղանց արագ ձեւափոխուում են և դա շատ յանախ է պատահում, ինչպէս հաւատացնում է գիտնական Սիմօնին:

Ուրիշ գէպըերում տեղի է ունենում այսպէս ասած՝ մետամօրֆօլ, այսինքն երազի որոշ մասերը աստիճանաբար անհետանում են և նրանց տեղը

բռնում են նորերը, որոնցից կազմում է նոր պատկեր:

Երազում երևացած պատկերները կազմում են մի տեսակ կրկնութիւն այն պատկերների, որոնց մենք տեսել ենք արթուն ժամանակ՝ քնելուց քիչ կամ շատ առաջ:

Երբեմն երազում մենք տեսնում ենք այնպիսի դէպքեր և պատկերներ, որոնք սովորական կեանքում երբէք չեն պատահում: Դրանք գոյանում են արտաքին աշխարհում առանձին-առանձին պատահող պատկերներից կամ նրանց մասնիկների միացումից:

Հէնց այդ է պատճառը, որ նոյն խոկ ամենասարսափելի և երևակալական երազներում կարելի է գտնել իրական պատկերների ու առարկաների մասեր:

Ահա մի օրինակ.

Մի պարոն ցերեկը պատահում է մի չափազանց կարծահասակ կնոջ և առանձին ուշադրութիւն է դարձնում նրա տարօրինակ հագուստի վրայ:

Հէնց միւնոյն զիշերը նա տեսնում է մի անձնաւորութիւն նոյնանձան հասակով ու հազուսառով: Բայց զրա աչքերը բոլորովին նման չէին բնական աչքերի: Յիշեալ կնոջ զեղեցիկ աչքերի փոխարէն երեսում էին կլոր ու չափազանց դուրս ընկած դնդեր:

Առաւոր նա ուշի ուշով զննում է սենեակի առարկաները և նկատում է փոքրիկ արձանը, որ ներկայացնում էր մի չինական հրէշ՝ ճիշտ նոյպիսի աչքերով, որպիսին նա տեսել էր երազում:

Այսպէս ուրեմն նրա երազի երկու մասերն էլ իրականութիւնից էին վերցրած:

Երազում տեսած առարկաներն ու անձնաւորութիւնները երբեմն բոլորովին անբնական մեծութիւն են ունենում:

Մերթ երեսում են չափազանց փոքրահասակ մարդիկ՝ գաշաջներ, մերթ հսկաներ:

Երկրորդ դէպքում, երբ երազ տեսնողը ինքն էլ մասնակցում է կատարւող այս կամ այն գործողութեան, նրա զարմանքն ու երկիւզը հասնում են ծալրահեղութեան և կատարեալ սարսափ են աղդում:

Ի՞նչն է պատճառը, որ երազում այդպիսի հրէշաւոր պատկերներ են երեսում:

Այդ պատճառը մեծ մասամբ վրիպում է մեր ուշադրութիւնից, բայց երբեմն էլ հնարաւոր է լինում տալ որոշ բացատրութիւն:

Այսպէս օրինակ, երբ մեր մարմնի մի որևէ մասը երկար ժամանակ ստատիկ սեղմուած է լինում, մեղ թւում է թէ այդ անդամը— (ձեռք, ոտք, զլուխ և այլն) արտասովոր մեծութիւն ունի:

Տեղական անուրջները որոնց ժամանակ մարմ-

Նի զանազան անդամները արտասովոր մեծութեամբ են երեսւմ, հաւանականօրէն կապ ունին շօշափելիքի հետ, այսինքն շօշափման նեարդերը այս կամ այն աղդեցութեան տակ առաջացնում են արտասովոր պատկերներ, որոնք և երեսւմ են երազում:

Այդպիսի բացարութիւնը հակառակ չէ դիտութեան փաստերին:

ԺԹ.

Մինչև այժմ մենք քննում էինք այսպիս ասած՝
տեսողական երազները:

Այժմ դառնանք այն երազներին, որոնք անմիշական կապ ունին լսելիքի ու շօշափելիքի հետ:

Երբեմն պատահում է, որ երազում մեր ներկայութեամբ խօսակցութիւն է տեղի ունենում կամ ինքներս ենք խօսակցում, բայց եթէ ուշադրութեամբ վերլուծէնք այդ երազները և քննենք, այն ժամանակ կտեսնենք, որ այդտեղ լսողական պատկերներ չկան:

Մենք հասկանում ենք խօսող անձնաւորութեանը, բայց չենք լսում նրա ձայնը:

Մենք խօսում ենք, բայց չենք զգում, չենք լսում մեր ձայնը:

Ուրեմն երկու դէպքումն էլ լսողական պատկերներ չկան:

Այստեղ աւելորդ չի լինի մի քանի խօսք ասել այն խելազարների մասին, որոնք պնդում են, թէ իրանց հետ միշտ խօսողներ կան:

Դրանք էլ լսողական պատկերներ չեն ընդունում, այլ քնած մարդու նման մտքերը հասկանում են առանց ձայնի, առանց խօսքերի: Այդ մտքերը սեփական ուղեղի արդիւնքն է, բայց դրանց թւում է, թէ լսում են ուրիշից:

Նոյնանման երազներ էլ շատ են պատահում: Դառնանք այժմ այն երազներին, որոնք խսկապէս լսողական պատկերներ են առաջացնում:

Այդ դէպքում երազ տեսնողի զիտակցութեան հասնում է խօսակցի ձալնը կամ մի որեւէ աղմուկ:

Երբեմն այդ ձայնն այնքան որոշ է լինում և նրա առաջացրած լսողական պատկերն այնքան պարզ, որ քնած մարդուն զարթեցնում է: Այդպէս են զլխաւորապէս ան ու երկիւղ ազդող երազները:

Օրինակ, երբ երազում տեսնում ենք, որ մեզ գնդակահար անել են ուղում, այդ ժամանակ բնականաբար պիտի զարթնենք, վեր թռչնք...

Այդպիսի դէպքերում անհատական զգացմունքը երբեմն այնքան ուժեղ է լինում, որ նոյնիսկ զարթնելուց յետոյ էլ մարդու ականջին լսում է չարագուշակ ձայնը:

Տեսողական պատկերների մասին էլ կարելի է նոյնն ասել, ինչ որ լսողական պատկերների մասին:

Մի պարոն պատմում է, որ երազում հրդեհ
էր տեսել և երկիւղից զարթնել: Բայց զարթնե-
լուց յետոյ էլ նրա աչքին երևացել է նոյն սար-
սափելի պատկերը—հրդեհը:

Մի բժիշկ պատմում է, որ իր հիւանդ երե-
խալի մասին մտածելով, քնել է բազկաթոռի վրայ
և երազում մի մեծ կապիկ տեսել: Նա զարթնել
է քնից, բայց կապիկի պատկերը գեռ մի քանի
վալրկեան չէ հեռացել աչքի առաջից...

Արդեօք, երազում շօշափողական պատկերներ
էլ լինում են, թէ ոչ, ուրիշ խօսքով ասած՝ քնած
ժամանակ շօշափելիքը կարողանում է գործել...

Այս, թէ ոչ յաճախ:

Շոշափողական պատկերները երբեմն չափա-
զանց դուրեկան են լինում, օրինակ, տռիւանքի,
սեռական զգացմունքների հետ կապ ունեցող ա-
նուրշները, երբեմն էլ նրանք զգուանք են պատ-
ճառում, օրինակ, դորտի թաց—լպրծուն կաշին:

Զգայական բոլոր տպաւորութիւններից ամե-
նից շատ երազներ են առաջացնում շօշափողական
տպաւորութիւնները:

Պատճառը հասկանալի է. շօշափողական տպա-
ւորութիւններ ընդունում է մեր ամբողջ մարմինը:

Ամենափոքրիկ ցաւը, ամենաչնչին քերծուածքը
աղդում են նրա վրայ և որոշ զրգիւներ առաջ-

նում: Այդ զրգիւները հասնում են ուղեղին և այն-
տեղ զանազան պատկերներ գոյացնում:

Հարստութեան ու ճաշակի հետ կապ ունեցող
երազները չափազանց հազուազիւտ են:

Ճիշտ է, երբեմն երազում տեսնում ենք ճոխ
սեղան, բազմազան կերակուրներ, բայց նրանց համը
չենք զգում. տեսնում ենք ձաղիկներ, բայց նրանց
հոսք չենք տոնում: Ի հարկէ բացառութիւններ կա-
րող են պատահել...

Առհասարակ երազների բնորոշ յատկութիւնն
այն է, որ նրանք անկապ են լինում:

Պատկերները, գործողութիւնները հետեւում
են միմեանց առանց մի որևէ է կարգի, առանց հե-
տեղականութեան:

Բայց ի հարկէ պատահում են և այնպիսի
երազներ, երբ գործողութիւնը կատարւում է որոշ
կարգով, խօսակցութիւնը—որոշ տրամաբանու-
թեամբ, այնպէս որ գժուար է զանազանել ար-
թուն ժամանակուալ գործողութիւնից ու խօսակ-
ցութիւնից:

Նոյն իսկ ամենատանկար երազների մէջ կա-
րելի է զանել մի բնական օղակ, որով առանձին
պատկերներ կապում են իրար հետ:

Աւելորդ չի լինի մի քանի խօսք էլ երազների
տեղութեան մասին ասել:

Որքան ժամանակ են տեսնում երազները, որոնք

Երբեմն այնքան բարդ ու երկար գործողութիւններ են պարունակում իրանց մէջ:

Բազմաթիւ փորձերը ցոյց են տալիս, որ բաւական է միայն մի քանի վայրկեան, որպէսզի մեր հողեկան հայեացքի առաջից անցնեն հազարաւոր դէպքեր...

Մի դրամատուրգ, ներկայ լինելով իր պիեսի ներկայացման, քնում է և երազ տեսնում:

Նա տեսնում է զրամայի ամբողչ ներկայացումը, հետեւում է գործողութեան զարգացմանը, հասարակութեան վերաբերմունքին:

Բուռն ծափահարութիւնների տակ վերշանում է պիեսը: Դրամատուրգը զարթնում և տեսնում է, որ բեմի վրայ գեռ նոր են սկսել պիեսի առաջին աեսարանը:

Աւրեմն նրա երազը միայն մի քանի վարկեան էր տեսել:

ի.

Այժմ դառնանք այն երազներին, որոնք կախում ունին ներքին հիւանդութիւնից:

Այդ կարգի երազներն իրանց մէջ պարունակում են տարօրինակ ու անկատ պատկերներ՝ երբեմն ճնշող ու սարսափեցնող բովանդակութեամբ:

Յաճախ պատահում է, որ մարդու մի որևէ

ցաւը երազի պատճառ է գառնում: Նա տեսնում է երազում, որ հիւանդացել է և ցաւը կենարոնացած է լինում մարմնի այն մասում, որը իսկապէս հիւանդ է:

Այդպիսով երազած պատկերը հիմնուած է լինում իրականութեան վրայ, թէև նա երբեմն չափազանցացրած բովանդակութիւն է ունենում:

Դա բոլորովին դարձանալի չէ. քնած մարդը հիւանդ է և շատ լաւ զիտէ այդ բանը: Նա ցաւ է զգացել արթուն ժամանակ, ուստի բնականաբար երազում էլ նոյնը պիտի տեսնէ:

Շատ մարդիկ էլ երազում իրանց հիւանդացած են տեսնում, զարթնում են բոլորովին առողչ, բայց մի որոշ ժամանակից յետոյ իսկապէս հիւանդանում են...

Ահա Մակարիօի յայտնի օրինակը.

— Մի մարդ երազում տեսնում է, որ օձը կծել է նրա կրծքի ծախս կողմից և մի քանի ժամանակից յետոյ այդ միւնոյն տեղում իսկապէս յալտնուում է մի մեծ խոց:

— Մէկ ուրիշը մեռնելուց երեք օր առաջ տեսնում է, որ կաթուածահար է եղել: Եւ նիշտ որ երեք օրից յետոյ նա մեռնում է կաթուածից:

— Մի հիւանդ երազում տեսնում է, որ իրը թէ նրա ուր քարացել է և կարճ ժամանակից յետոյ այդ ուր կաթուածահար է լինում:

—Մի չահիլ կնոջ երազում թւում է թէ նա
լաւ չի տեսնում առարկանները և խկապէս, կարճ
միշոցից յետոյ նրա աչքերը լուրջ կերպով հիւան-
դանում են:

—Մէկ ուրիշը երազում կոկորդի ցաւ է
զգում, զարթնում է բոլորովին առողջ, բայց շու-
տով կոկորդի վտանգաւոր բորբոքում է ստանում:

Այդ փաստերը արժանի են լուրջ ուշադրու-
թեան, ինչպէս իրաւացի կերպով նկատում է բր-
ժիշկ Սիմօնին:

Դրանց հիման վրայ կարելի է եղրակացնել,
որ մարդ քնած ժամանակ որոշ բաներ աւելի լաւ
է զգում, քան թէ արթուն ժամանակ:

Բայց կարելի^o է, արգեօք ասել, թէ երազները
ճիշտ գուշակութիւններ են անում, թէ նրանց
մէջ մարգարէական ոյժ կայ...

Եթէ վերոլիշեալ փաստերի մէջ մի որևէ գերբ-
նական զօրութիւն որոնենք, այն ժամանակ ծայ-
րահեղ սխալների մէջ կընկնենք:

Ամբողջ հարցի գաղտնիքը նրանում է, որ ներ-
քին զգացողութիւնները, զրգիւները աւելի պարզ
ու որոշ են դառնում, երբ մէր օրդանիզմը արտա-
քին աշխարհից զրգիւներ չի ստանում:

Իսկ եթէ երեմն ապագայի մասին էլ ճիշտ
պատկերներ ենք տեսնում—դա առաջ է դալիս
նրանից, որ արթուն ժամանակ մէնք մութ կեր-

պով մտածում ու զգում ենք միւնոյն բաները: Բայց
այդ հարցի մասին յետոյ աւելի մանրամասն կխօ-
սենք:

Պէտք է խոստովանել, որ գմբադդաբար մե-
զանում կան շատ մարդիկ, որոնք սնոտիապաշտու-
թեամբ են վերաբերւում դէպի երազները:

Դրանք կարծում են, թէ երազը նախախնա-
մութեան մի նշան է, թէ պէտք է նրա ցուցմունք-
ներով շարժուել...

Պատահել են դէպքեր, երբ սնոտիապաշտ
մարդիկ, երազի աղդեցութեան տակ ծանր հիւան-
գութիւններ են ստացել, մեծ սխալներ և նոյն խոկ
ոնքագործութիւն են կատարել:

Հարկաւոր է նկատել, որ մի քանի հիւանդու-
թիւններ որոշ ժամանակ թագնուած դրութեան
մէջ են մնում:

Սակայն թագնուած լինելով արթուն ժամա-
նակ, նրանք նկատելի են դառնում քնի ընթաց-
քում և զրանով զանազան երազներ առաջացնում,
թէև դա գեռ վերջնականապէս ապացուցուած չէ:

Քնի ժամանակ հիւանդութիւններն աւելի
նկատելի են դառնում, որովհետեւ արտաքին աշ-
խարհը այլևս չի զրաւում մեր ուշադրութիւնը:

Քնած դրութեան մէջ վառ երեակալութեան
համար ոտքի, զլիսի, կամ մարմնի մի ուրիշ ան-

Դամի ամենաչնչն փոփոխութիւն անդամ բաւա-
կան է, որպէսզի նա ստեղծէ բարդ պատկերներ:

Անձան գիտութիւնը արդէն հսկայական քայ-
լեր է անում գէպ առաջ, նա ամեն կերպ աշխա-
տում է բարձրացնել ժամանակի ու տարտիւթեան
քողը և բացարել անհասկանալի երկոյթները:
Գիտութիւնը հրաշքներ կարող է գործել:

Իբրև ապացոյց բաւական է լիշել հեռախօսը,
անթել հեռագիրը, էլէկտրական ինքնաշարժ կառ-
քերը և այլն այլն:

ԻԱ.

Այժմ աւելի մանրամասն խօսենք այն երազ-
ների մասին, որոնց շարժառիթները ներքին օրդան-
ներից ստացած տպաւորութիւններն են:

Դեռ հին ժամանակներից յայտնի էր, որ երազ-
ների մի մասը անմիշական կախում ունի մարմնի
անդամների որոշ գրութիւնից: Այժմ գիտութիւնն
էլ հաստատում է այդ փաստը:

Ահա մի քանի հասարակ օրինակներ.

Ինչպէս յայտնի է, բաղցածը երազում հայ ու
համեղ կերակուրներ է աեսնում, ծարաւ ունեցողը
—զովացուցիչ խմբչքներ: Երկար ժամանակ շարու-
նակւող ծարաւը ստեղծում է երկարայական շատ-
րուաններ, աղբիւրներ ու առուակներ:

Այդ պատկերները յանկարծակի երկում են
մեր մտաւոր հորիզոնում և ապա անհետանում:

Մեր օրդանիղնի գործունէութիւնը, այս կամ
այն անդամի ցաւը, նրա կատարած գործողութիւնը
երբեմն երազում որոշ պատկերներ են առաջացնում:

Լաւ յայտնի են այն երազները, որոնց հիմքը
սրտի և շնչառութեան գործարանների ցաւն է:

Շնչառութեան գործարաններից կախում ու-
նեցող երազները միշտ մի որոշ ուղղութիւն են
ունենում:

Այդ գէպքում երազում սովորաբար երկում
են սարսափելի տեսարաններ, վտանգ, երկիւղ և
այլն:

Մի մարդ, ասում է Սիմօնին, ունէր լաւ առող-
ջութիւն, բայց յանախ տանշւում էր բրօնխիտ կո-
չուող հիւանդութիւնից: Ամեն անդամ, երբ կրկ-
նուում էր այդ հիւանդութիւնը, նա աեսնում էր
հետեւել բովանդակութեան երազներ.

—Քնելուց մի քանի ժամ յետոյ նրան թւում
էր, թէ դտնում է մի ամայի ու անմարդաբնակ
տեղում: Նա զգում էր մօտեցող վտանգը: Ահա գա-
լիս է սարսափելի արտաքինով մի ծիաւոր և ընկ-
նում նրա յետեկից: Փախչելն անհնարին է. թշնա-
նամին արդէն մօտ է: Նա սարսափահար է լինում
և հաղիւ շունչ քաշելով դարթնում:

Դրա պատճառը հետեւելն է. հիւանդի բրօն-

խաների մէջ հաւաքւում է մէջ քանակութեամբ
խորխ և դրանով դժուարացնում շնչառութիւնը:
Խորխը մաքրուելուն պէս հիւանդը կարողանում
է հանդիսա քնել:

Ամենին յալտնի է, որ մարսողութիւնը խան-
գարուելիս մարդ մի տեսակ ծանրութիւն է զգում:

Այդ գէպքում քունը լինում է անհանդիսա,
իսկ երազը—ճնշող: Մարդուն թւում է, թէ նրա
կրծքին մի մէջ ծանրութիւն է զրած, թէ ահար-
կու թշնամին ծունկը սեղմել է նրա վզին, թէ
սարսափելի գազանը ուզում է խեղդել նրան, թէ
փուլ եկող պատը միանգամից ոչնչացնելու է նրան...

Այդ կարդի երազները կարելի է բացատրել
նրանով, որ երբ ստամոքսը լիքն է լինում, շնչառու-
թիւնը դժուարանում է և այդ պատճառով ել
առաջ են դալիս սարսափելի պատկերներ:

Շնչառութեան դորձարանների մի որևէ խան-
գարումը, մի որևէ ճնշումը կարող է առաջացնել
երազներ, որոնց մէջ կրկնում է զրէթէ այդ միե-
նոյն զգացմունքը:

Մի մարդ երազում տեսնում է, որ իբր թէ
բաժակով չուր խմելիս աւազի կաորները ընկնում
են կոկորդի մէջ: Նա ցաւ է զգում և վախենում
է խեղդուելուց: Այդ զրութեան մէջ նա զարթնում
է քնից և տեսնում, որ իսկապէս դժուարութեամբ

է շունչ քաշում, որովհետեւ վերմակը ծածկել էր
նրա բերանը:

Ահա ալդպէս երեսում է, որ ստամոքսի, աղիք-
ների, շնչառութեան գործարանների, սրտի և սե-
ռական զգացմունքների զանազան հիւանդութիւն-
ներն ու ցաւերը կապ ունին երազների հետ:

Այստեղ դժուար է կանգ առնել այն երազ-
ների վրայ, որոնք կախում ունին սեռական զգաց-
մունքներից: Դժուար է, որովհետեւ չի կարելի այդ
նիւթի մասին պարզ խօսել, առանց դուրս գալու
քաղաքավարութեան սահմաններից: Հենց ալդ
պատճառով ել ստիպուած ենք բաց թողնել երազ-
ների այդ հետաքրքիր մասը:

Առհասարակ չպէտք է կարծել, որ ներքին
օրգանների զանազան խանգարումները և զրգիռ-
ները անպատճառ երազներ պիտի առաջացնեն:

Իւրաքանչիւր զրգիռ պէտք է հասնի որոշ աս-
տիճանի, պէտք է շբջապատուած լինի որոշ պայ-
մաններով, որպէսզի կարողանայ երազների պատ-
ճառ դառնալ:

իթ.

Բայց կան և ուրիշ տեսակ երազներ, որոնք բատ
երեսով թին կախում ունին միմիայն ուղեղի գործու-
նէութիւնից:

Այդ երազները լինում են որոշ, հետևողական և տրամաբանօրէն, նրանց մէջ արտայալտուած մտաւոր գործունէութիւնն էլ նոյն ձևն է ունենում, ինչ որ արթուն ժամանակ:

Այդ կարգին պատկանում են թէ մարդարէական երազները և թէ այն երազները որոնց մէջ մարդ ստեղծագործում է գեղարուեստի արտադրութիւններ կամ մի որևէ գիտական ու բարդ հարցի լուծում:

Մտաւոր զբաղմունք ունեցող մարդիկ անշուշտ նկատած կ'լինին, որ մէր ուղեղը երբեմն գործում է ինքնարերաբար առանց կամքի մասնակցութեանը:

Այդպիսի փաստերը չափազանց բազմաթիւ են:

Աշակերտները սովորաբար երեկոներն են սովորում իրանց դասերը: Նրանք ասում են, որ այդ ժամանակ աւելի լաւ են ըմբռնում: Եւ դա միանգամայն իրաւացի է: Երեկոյեան սովորած դասը նրանք հետեւեալ առաւտօները աւելի լաւ են իմանում, քան թէ օրամուտին:

Այդ միենոյնը նկատում է նաև զբականական աշխատանքի ժամանակ, գիտական հարցեր լուծելիս և այն:

Երբ աշխատողը մի որևէ դժուարութեան հանգիստելով, թողնում է իր աշխատանքը, այն ժամանակ խելքը շարունակում է ինքնուրոյն կերպով աշխատել, ուստի մի քանի օրից լետոյ, երբ

մարդ նորից վերասկսում է կիսատ թողած աշխատանքը, կարողանում է հեշտութեամբ յաղթել դժուարութեանը:

Հասկանալի է, որ մտաւոր աշխատանքը, որը կատարում է ուղեղի թելազրութեամբ, կարող է առաջացնել զանազան երազներ:

Դրանք պատկերաւոր կերպով ներկայացնում են այն հարցերը, այն խնդիրները, որոնցով մարդ զբաղուել է արթուն ժամանակ:

Այդպիսի երազների մէջ անշուշտ կ'լինեն տեսողութեան ու լսողութեան առաջացրած պատկերներ:

Երազ տեսնողին թւում է, թէ նա ճառ է արտասանում և զրա մէջ պատմում է իր ուսումնասիրութեան արդիւնքը, թէ նրա մի ծանօթը բացատրում է այն հարցի լուծումը, որը երկար ժամանակ զբաղեցրել ու տանչել էր նրան և այն:

Մարդ երազում յանախ տեսնում է այն, ինչ որ նրան զբաղեցրել է ցերեկը, բայց չի լսում ոչ մի խօսք, ոչ մի ծայն:

Նա հանդիսատես է լինում մնչկատակութեան (պանտօմիմալի), որից և իմանում է իր ցանկացածը:

Այդ բոլոր դէպքերումն էլ երազների հիմքը կազմում են այն մաքերը, այն գաղափարները, որոնք ցերեկը զբաւել են մարդու ուշադրութիւնը, որոնց մասին նա մտածել ու աշխատել է:

Թրանսիական յեղափոխութեան նախարարներից մէկը—երևելի Վօլտերը պատմում է, որ մի անգամ երազում նա շարադրել է իր «Հենրիադա» պօէմայի մի ամբողչ Երդը, որը նկատելի չափով տարբերում էր միւսներից:

Դրա պատճառը հասկանալի է: Վօլտերը արթուն ժամանակ, իհարկէ շատ էր մտածել իր պօէմայի մասին, կազմել էր ընդհանուր ծրագիրը, նախադել էր առանձին մասերը, ուսաի և քնած ժամանակ նրա հատ ու կտոր մաքերը ծուլուել են միասին և կազմել մի ամբողչ Երդ:

Շատ անգամ մարդ երազ է տեսնում այն դէպքերի մասին, որոնք մեծ նշանակութիւն ունին նրա համար, որոնք մեծ չափով կանել են նրա ուշըն ու միտքը:

Ահա օրինակը.

Մի պարոն տաք վիճաբանութիւն է ունենում մի տիկնոջ հետ կանանց կրթութեան մասին: Վիճաբանութեան հիմքը այն է լինում, թէ կանանց ու տղամարդկանց կրթութիւնը միատեսակ պիտի լինի, թէ առանձին-առանձին տղայոց ու օրիորդաց գլըռոցներ չ'պէտք է լինին և այն: Վիճաբանութեան վերջում պարոնը տալիս է տիկնոջը կարգալու մի գիրք այդ հարցի մասին:

Անցնում է տարի ու կէս: Պարոնին հարկաւոր է լինում յիշեալ գիրքը: Նա մի ամբողչ շաբաթ-

դիշեր—ցերեկ մտածում է աշխատում է գտնել գիրքը, բայց ոչ մի հետեւանքի չի հասնում:

Նրա ապրած զիւղում փոստ էլ չկար, այնպէս որ նա անկարող էր գոնէ նոր գնել: Իսկ զիրքը հարկաւոր էր, շատ հարկաւոր: Նա մի անգամ էլ ըրքը ում է բոլոր անկիւնները, բոլոր պատճենները, բայց ապարդիւն:

Յոզնած ու տխրած նա քնում է և երազում տեսնում յիշեալ տիկնոջը: Նրա յիշողութեան մէջ զարթնում է անցեալը. նա մտաբերում է, որ այդ տիկնոջ մօտն էր որոնած զիրքը:

Այս դէպքում երազէ միշոցով բացուած փաստը իսկապէս յայտնի էր երազ տեսնողին, բայց կամքը չէր կարողացել գտնել նրան յիշողութեան լայնարձակ լաբիրինթոսում:

Հէնց այդ պատճառով էլ երազում ուղեղը շարունակել է լարուած գործունէութիւնը, վերականգնեցը էլ այդ գրքի հետ կապուած մտապատկերները և վերջ ի վերջոյ հասել է իր նպատակին գտել է որոնածը...

ԻԳ.

Ժողովրդի մէջ առանձին հետաքրքրութիւն են զարթեցնում այսպէս ասած մարգարէական երազները, որոնք մարգարէական կամ ուրիշ խօս-

քով ասած՝ զուշակողական բովանդակութիւն են
ունենում:

Այդ կարգի երազներն էլ առաջ են դալիս
նրանից, որ մարդու ուղեղն ու միտքը կենտրոնա-
ցած է լինում մի որևէ հարցի վրայ:

Թէ այդ խնդրում և թէ առհասարակ այն
բոլոր երազների վերաբերմամբ, որոնց մէջ հրաշքի
նշաններ են երեսում, բժիշկ Սիմօնի ասելով, մար-
դիկ բաժանւում են երկու տարբեր դասակարգերի:

Մի մասը կարծում է, թէ զրանց մէջ իսկա-
պէս հրաշք կայ, միայն որոշ չափով, իսկ միւս
մասը բոլորովին հերետմ է հրաշքի դոյութիւնը,
ոչ մի նշանակութիւն չի տալիս այդ տեսակ երազ-
ներին:

Բայց երկու կողմերն էլ կարող են սխալուել:

Եթէ մի որևէ բնական-գիտական աշխատու-
թեան մէջ լիշտում են այդ ուղղութեան փաստերը
և եթէ ուսումնասիրողի ընդունակութիւնն ու
մտաւոր կարողութիւնը կասկածի տեղիք չեն տա-
լիս, այն ժամանակ իրաւունք չունինք ենթադրու-
թիւններով հերքելու գիտութեան այդ փաստերը:

Կան երազներ, որոնք թէւ մարդարէական
բովանդակութիւն են ունենում, բայց այնուամե-
նալիւ ենթարկում են որոշ բացատրութեան:

Մի որևէ դէպք նախագուշակող երազները
չափաղանց ըիչ են պատահում: Եւ եթէ նրանց

բովանդակութիւնը երբեմն իրականանում է՝ զա-
կարելի է բացատրել հասարակ զուգաղիպութեամբ:

Եւ իսկապէս երազների մէջ երեսում են ան-
թիւ—անհամար պատկերներ. ի՞նչ զարմանալի
բան կայ, եթէ դրանցից մէկը կամ միւսը իրակա-
նանալու: Ուրեմն աւելորդ է ալդպիսի զուգաղիպու-
թիւնը հրաշք համարել:

Մարդարէական երազները տեղի են ունենում
միայն այն ժամանակ, երբ մարդու ուղեղը լա-
րուած կերպով գործում է որոշ ուղղութեամբ:

Եթէ ուշադրութեամբ քննենք այդ երազները,
այն ժամանակ կ'տեսնենք, որ նրանց տեսնողը
միշտ էլ մի որևէ ծանր վշտի ու տանչանքի ազգե-
ցութեան տակ կամ սպասողական դրութեան մէջ
է եղել:

Բայց դրանից կարելի է համոզուել, որ երազ-
ների մէջ երեացած գէպը երն ու առարկաները մարդ-
կարող էր նախատեսնել արդէն յախնի հանգա-
մանըների ու շրչապատող պայմանների հիման
վրայ:

Ոհա մի պերճախօս օրինակ.

Զինաստանում ապրող մի տիկին պէտք է
պետական նաւակով զնար մօտակալ քաղաքը: Ճա-
նապարհորդութեան նախընթաց գիշերը նա երա-
զում շարունակ հրդեհ ու նաւի խորտակում է
տեսնում:

Նա սարսափով, ճչալով զարթնում է քնից,
բայց նորից քնելիս դարձեալ աւեսնում է չարդ ու
փշուր եղած նաւեր և ալիքների հետ կռուող ճա-
նապարհորդներ:

Չնայելով այդ չարագուշակ երազին, ճանա-
պարհորդութիւնը տեղի է ունենում և նախագու-
շակած դժբաղդութիւնն իրադրծում է: Նաւի
կաթսան արարում է, տիկինը վերը է ստա-
նում և մեռնում է սարսափելի տանջանքների մէջ:

Նկարագրած փաստը պարզ կերպով ցոլց է
տալիս այդ երազի մարդարէական բովանդակու-
թիւնը: Բայց մի՞թէ մի որևէ դերբնական ոչի
արդիւնք է դա: Մի՞թէ հրաշք է:

Բոլորովին ոչ: Ամբողջ գաղութին լայտնի էր,
թէ որքան վատ են շինուած պետական նաւակ-
ների կաթսաները, թէ որքան վտանգաւոր է նր-
րանցով ճանապարհորդելը: Ուրեմն ճանապարհոր-
դութեան պատրաստող տիկինն էլ քնականաբար
պիտի մտածէր այդ վտանգի մասին: Հէնց այդ լա-
րուած մտածմունքն էլ դարձել է չարագուշակ
երազի հիմքը:

Բայց պատահում են աւելի խորհրդաւոր երազ-
ներ: Դիմենք օրինակներին.

—Մի անգամ իշխանուհի Կօնտին երազում
աւեսնում է, որ իր արքունիքի մի մասը պէտք է

փուլ դայ, որ այնտեղ քնած երեխաներին վտանգ
է սպառնում:

Նա երազը պատմում է երեխաների ծծմալ-
րերին, բայց սրանք հանգստացնում են, ասելով
“բոլոր երազները խաբուսիկ են”:

Այնուամենայնիւ իշխանուհին պնդում է, որ
երեխաներին դուրս հանեն այդ քնակարանից: Ծա-
ռաները հաղիւ են վերչացնում այդ հրամանը կա-
տարել, երբ երեխաների ննջարանի առաստաղը
փուլ է գալիս...

—Մի քահանայ, մանելով Ա. Լիւդովիկոսի
եկեղեցին, սկսում է ծնկաչոք ազօթք անել: Բայց
հէնց առաջին ծնրադրութեան ժամանակ մի ան-
դիմագրելի պահանջ ստիպում է նրան միւս կողմն
անցնել:

Քահանան ուշք չի դարձնում, սակայն պա-
հանջն այնքան է մեծանում, նախազգացումն այն-
քան ուժեղանում, որ նա վերչապէս զիջանում է
—անցնում է եկեղեցու միւս կողմը.

Հէնց այդ միւնքոյն բոպէին եկեղեցու կամարից
պոկւում է մի քար և ընկնում այնտեղ, որտեղ
քիչ առաջ կանգնած էր քահանան:

—Շուեղացի զրող Սվեղէնքօրդը գտնւում էր
հեռու հայրենիքի մալրաբաղարից—Ստօկկհոլմից:
Մի անգամ նրան թւում է, թէ Ստօկկհոլմում
հրդեհ կայ:

Եւ իսկապէս այդ նախազգացումը նշաւում է: Հաւաքած տեղեկութիւններից երեսում է, որ հէնց այդ ժամանակ ամբողջ մալրաքաղաքը հրդեհուած է եղել...

Առաջ բերած օրինակները բաւական են. բայց մի՛թէ դրանց բոլորն էլ կարելի է բացարել հասարակ զուգաղիպութեամբ:

Մի քանի դէպքերում զուգաղիպութիւնն անկասկածէլի է, բայց երբեմն էլ հասարակ պատահականութեամբ չի կարելի բացարել իրազործւող երազները:

Յամենայն դէպս այդ երազներին էլ կարելի է որոշ բացատրութիւն տալ:

Հիմնուելով գիտական փաստերի վրայ, մենք ամենայն իրաւամբ կարող ենք ենթաղրել հետեւալը.

Մի քանի դատողութիւններ, որոնց հիմքը անգիտակցօրէն ընդունած տպաւորութիւններն են լինում, մշակւում - ձևակերպւում են ուղեղում և մեր գիտակցութեանը հասցնում իրանց վերջնական արդինքը - եղրակացութիւնը: Հէնց այդ վերջնական եղրակացութիւնն էլ մեզ վրայ հրաշքի տպաւորութիւն է թողնում, որովհետև նրա սկզբնական մասնիկների - հիմքի հետ ծանօթ չենք եղել...

Դրանից կարելի է եղրակացնել, որ մարդարէական երազները ոչ այլ ինչ են, եթէ ոչ անդի-

ամկցօրէն տեղի ունեցող գատողութիւնների վերջնական արդինքը - եղրակացութիւնը, որը միացած է լինում զգացողական որոշ պատկերների հետ: Ինչո՞ւ զարմանալ...

Մի՛թէ ըիչ է պատահում, որ մենք նոյն իսկ ամենածանր ու բարդ հարցերում գործում ենք առանց հետեւելու արտաքին տրամաբանութեան և հասնում ենք ցանկալի նպատակի, գտնում ենք այդ հարցերի լուծումը:

Ի՞՞.

Երազին բաւական նման է ցնորքը:

Այդ երկուսի նշանակութիւնն էլ շատ հետաքրքրական է: Ցնորքը մի տեսակ զգացողական տպաւորութիւն է՝ առանց այդ տպաւորութիւնն առաջնորդ առարկալի:

Նա շատ անգամ երեան է գալիս խելագարութեան հետ միասին: Ցնորքը երազի նման կարող է առաջ գալ բոլոր զգայարանքների ազդեցութեան տակ, այսինքն կարող է լինել տեսողութեան, լսողութեան և ընդհանուր զգացմունքի ցնորք:

Տեսողութեան ցնորքները լինում են տեսակտեսակ՝ անհատի հոգեկան ու մտաւոր աշխարհի համեմատ:

Շատ անգամ ցնորքի բովանդակութիւնը կախում է ունենում հիւանդի զբաղմունքից-արհեստից: Իբրև ապացուց բաւական է լիշել հոգեկան հիւանդների բժիշկ Մանեանի հետևեալ օրինակները.

—Հիւանդներից մէկը, որը արհեստով բանշարեղէն վաճառող էր, յատակի վրայ տեսնում էր կաղամբ, բողկ, աւելուկ, ուստի և մէծ զգուշութեամբ էր քայլում, որպէսզի չտրորէ...

—Հովիւր տեսնում էր իր կովերին ու ոչսար-ներին և կանչում էր նրանց...

—Աղաւնի վաճառողը կարծում էր, թէ ձեռքում բռնած ունի աղաւնի և աշխատում էր հացահատիկներով կերակրել նրան...

—Մի հիւանդ կին, որ զինետան ծառայող էր, խօսում էր երեակալական այցելուների հետ, խնդրում էր սպասել, բաժանում էր զինին և այն...

Յալտնի է, որ այսպէս ասամ կրօնական խելազարութիւն ունեցող հիւանդները ցնորքով տեսնում են Աստուածածնին, հրեշտակ-ներին և այն:

Այդ պատկերները միշտ նման են լինում արձանների, կրօնական դրբերի մէջ ներկայացրած տիպերին:

Փաստերը ցուց են տալիս, որ ցնորքները երբեմն կապ են ունենում հիւանդի սովորութիւնների հետ և դա շատ բնական է:

Վառ երեակալութեան տէր մի մարդ, որը երկար ժամանակ ժամկոչ էր եղել, ամառուայ ամենաշոգ եղանակին իր թէ տեսնում է աշխարհի ստեղծագործութիւնը:

—Նա կանգնած է բարձր աշտարակի գլխին և տեսնում է այն բոլոր ոչմերը, որոնք մասնակցում են ստեղծագործութեան:

Նրա երեակալութեան մէջ ստեղծագործութիւնը պատկերանում է նիշտ այնպէս, ինչպէս որ նկարագրուած է Ս. Գրքի մէջ, միայն նրա հետ խառնուած են լինում առասպելական պատկերներ, որոնցով լի են «Հաղար ու մէկ գիշերուայ» հեքիաթները:

Այսպէս օրինակ, աշտարակի գագաթին որտեղ կանգնած է ինքը, ապրում են ոգին և ֆէան: Դրանք թռչում—գնում են, որպէսզի կեանք ներշնչեն ամբողջ բնութեանը, որպէսզի աշխարհի զանազան մասերում իրագործեն աստուածալին կամքը...

Այդ միւնոյն աշտարակի գագաթին ընկած էին երկու ձու, որոնց շարունակ տաքայնում էր արեգակը: Այդ ձուերից գուրս եկան կինը և տղամարդը, որոնք աւելի կատարեալ, աւելի կենսունակ ու գեղեցիկ էին, քան թէ այժմեան մարդիկ: Նրանք թևեր ունէին և կարող էին թռչել դէպի երկինք:

Նրանց շուրջը վիստում էին բազմաթիւ թռչուններ և ահաղին մեծութեան չորքոտանի կենդանիներ։ Նրանք զարմանք էին աղդում իրանց ձեւերի, գոյների բազմազանութեամբ, երեմն էլ սարսափ էին առաջացնում, որովհետեւ նրանց թւում կալին առիւծ, վագր և ուրիշ գիշատիչներ։

Նա տեսնում է նաև Աստուծուն, մի պատկառելի ծերունու կերպարանքով՝ լի զօրութեամբ ու կենսունակութեամբ։

Աստուած նստած էր առանձին գահովքի վրայ և հրամաններ էր տալիս իր շուրջը խմբուած հրեշտակներին ու ողիներին։

Աստուծու վերեր պսպղում էին աստղերը, իսկ ձեռքում գտնւում էր այն գիրքը, որի մէջ գրուած են բոլոր մարդկանց բաղդն ու վիճակը։

Հրեշտակներն ու ողիները մօտենում էին աշտարակին և նորից հեռանում՝ տիեզերքի զանազան մասերում կեանք ու լոյս տարածելու։

Դրանցից մի քանիսը նման էին սովորական մարդկանց, մի քանիսն էլ հիանալի թռչունների։

Հիւանդը շատ լաւ լիշում է, որ ապրել է այդ երեակայական աշխարհում, բարձր աշտարակի վրայ, որ կախուած է եղել անհուն տարածութեան մէջ։ Անուշահոտ քամիները օրօրում էին նրան, իսկ ժակող լոյսը թուլ չէր տալիս երկնային մարմինների շարժում տեսնելու։

Եւ քիչ չեն ալգողիսի օրինակները։ Ահա մի ուրիշ օրինակ, որից պարզ երեսում է, որ ցնորքը անմիջական կապ ունի իր սկզբնապատճառի հետ։

—Մի մարդ Անգլիայում ճանապարհորդելիս յանկարծ խելագարւում է։ Պատճառը սաստիկ վախն է լինում. —Լօնդոնի միջապատ փողոցով անցնելիս նա յանկարծ տեսնում է դիմացից եկող շոգեկառքը և սարսափահար լինում։

Դրանից յետոյ նա յանախ ցնորքի մէջ տեսնում է լապտերն ու այն շոգեկառքը, որը նրան ոչնչացնել էր սպառնում։

Խելագարութեան այն դէպքերում, երբ հիւանդը կարծում է, թէ դիւահար է եղել, նա տեսնում է սատանային զանազան ձեւերով։

Առհասարակ բոլոր դէպքերումն էլ ցնորքի ժամանակ երեացած պատկերը համապատասխանում է այն զաղափարին, այն մտապատկերին, որ հիւանդն ունի ցնորքի առարկացի մասին։

Սրբերի պատկերները միշտ գեղեցիկ ու զրաւիչ է լինում, իսկ չար ողիները — տղեղ և զզուանք ու սարսափ աղղող։

Ցնորքների մասին կարելի էր շատ բան զբել, բայց կարծում ենք այսքանն էլ բաւական է։ Այդ հարցի մասին մենք մանրամասն կ'խօսենք մի ուրիշ զրքոյկով՝ „Շոգեկան հիւանդութիւնները“։

Նատ հետաքրքիր է արբեցողների—ալկօնօլիկ-ների զառանցանքը, որի ժամանակ երբեմն հիւանդը տեսնում է տարօրինակ ու սարսափելի կենդանիներ:

Այդպիսի հիւանդն ասում է, որ նրան ստիպում են տեսնել զանազան ուրուականներ, օձեր ու կենդանիներ:

Ցնորքի ժամանակ պատկերները միշտ կերպարանափոխուում են, առաջին պատկերին փոխարինում է երկրորդը, երրորդը և այլն:

Մի քանիսին այդ պատկերները երեսում են պարզ, որոշ գծերով, իսկ մի քանիսին էլ—խաւար, անորոշ:

Կայ մի տեսակ ցնորք, որը պատահում է մտաւորապէս բոլորովին առողջ մարդկանց: Բայց այդ մարդիկ հաւանականօրէն ունենում են աչքի հիւանդութիւն, ինչպէս ենթադրում է մի գերմանացի պրօֆեսոր:

Այդ ցնորքը պատահում է քնի և արթուն դրութեան միշրնթացքում, որը յախնի է ամեն մի մարդու:

Այս գէպքում պատկերները երեսում են յանկարձակի և որոշ ժամանակից յետոյ անհետանում են, աստիճանաբար ազօտանալով և նոր պատկերների տեղի տալով, մինչեւ որ վրայ է հասնում քունք կամ կատարելապէս արթուն դրութիւնը:

~~~~~

ԻԵ.

Հողեկան հիւանդութիւնների ժամանակ տեղի ունեցող զգացողական խանգարումների շարքում առաջնակարգ տեղ են բռնում լսողութեան ցնորքները:

Այդպիսի ցնորքներ ունենում են այն խելագարները, որոնք շարունակ գանգատում են անդայտ մարդկանց հալածանքից ու վիրաւորանքից:

Լսողութեան այդ սխալ զգացողութիւնները չափազանց բազմատեսակ են: Մի գէպքում ականչում հասարակ աղմուկ է լսւում, իսկ ուրիշ գէպքում բազմաթիւ ու բազմազան ծայներ:

Հիւանդին թւում է թէ այդ ծայները գալիս են մօտակայ տարածութիւնից, սովորաբար՝ պատերից, առաստաղից, յատակից, վառարանից և այլն: Երբեմն էլ նա կարծում է, թէ ծայներ դալիս են հեռու տեղերից՝ տան ներքնայարկից, կտուրից և նոյն իսկ մի քանի վերստ հեռաւորութիւնից:

Հեռու տեղ գտնուող ծանօթների ծայները լսելով, հիւանդը կարծում է, թէ դրանք մի առանձին կախարդական զօրութիւն ունին, որով կարողանում են իրանց ծայնը լսելի դարձնել նոյն իսկ մեջ հեռաւորութիւնից:

Հալածանքի զառանցանքից տանչւող հիւանդները սովորաբար իրանց համար շատ անախորժ

խօսակցութիւններ են լսում, օրինակ՝ ճրանց ասում են, թէ պիտի ալրեն, կտոր-կտոր անեն և այն: Կանանց տանչում են ցինիքական խօսակցութիւնները, վիրաւորական առաջարկութիւնները:

Երբեմն հիւանդներին թւում է, թէ լսում են սիրելի անձնաւորութեան—ամուսնու, կնոշ, երեխաների լացն ու հառաջանքը:

Այսպէս ասած՝ կրօնական խելագարութիւնից տանչող հիւանդներին թւում է, թէ խօսում են Աստուծոյ, հրեշտակների, սրբերի հետ, լսում են նրանց խորհուրդները այս կամ այն մարդու, այս կամ այն հարցի մասին:

Վերոյիշեալից պարզ երեսում է, որ թէ լսողութեան և թէ տեսողութեան ցնորքների ժամանակ ցնորքի բովանդակութիւնը անմիշական կապունի հիւանդին զբաղեցնող հարցերի ու դադափարների հետ:

Շատ անդամ թէ լսողութեան և թէ տեսողութեան ցնորքները միաժամանակ են տեղի ունենում:

Երբեմն հիւանդը լսում է մի ձայն, բայց ոչ ոքի չի տեսնում և այդ բանը նրան զարմացնում — վախեցնում է կամ բարկացնում:

Հէնց ալդ պատճառով էլ հիւանդը իր լսած ձայնը կամ վիրաւորանքը վերագրում է «աներկոլթ մարդկանց»:

Նա չի կասկածում, թէ այդ մարդիկ գոյութիւն ունին, այլ կարծում է, թէ որոշ զօրութեամբ «աներկոլթ» են դարձել:

Հարկաւոր է նկատել, որ լսողութեան ցնորքները միանդամից առաջ չեն դալիս: Հիւանդը սկզբում լսում է խառն աղմուկ:

Այդ գրութիւնը շարունակում է մի որոշ ժամանակ: Յետոյ նա լսում է զանազան ձայներ՝ սկզբում միայն քնից առաջ կամ զարթնելուց յետոյ անմիշապէս, իսկ յետոյ նաև ցերեկները:

Կան հիւանդներ, որոնք յայտնում են, թէ իրանց հետ խօսում են, բայց իսկապէս նրանք ոչ մի ձայն չեն լսում:

Այդպիսի հիւանդներից մի քանիսը երբեմն ասում են, թէ ձայները գուրս են դալիս իրանց բերանից, դլիսից և այն: Բայց բոլոր դէպքերումն էլ լսողութեան տպաւորութիւններ չեն լինում:

Հաւանականօրէն նոյնը պէտք է ասել և այն մարդարէների մասին, որոնք բազմաթիւ էշեր են դրաւել պատմութեան մէջ:

Ամենայն հաւանականութեամբ զրանք էլ նոյնանձան հիւանդ մարդիկ են եղել:

Անշուշտ մեզանից շատերը նկատած կ'լինեն, թէ որքան սերտ կերպով են կապուած միտքն ու նրա արտայալտութիւնը:

Երբեմն զիրք կարդալիս թէկ մեր շրթունք-

ները չեն շարժւում, մի բան չեն արտասանում,  
բայց մեր ներքին աշխարհում կարծես արտասա-  
նում ենք իւրաքանչիւր բառ:

Յայտնի է նոյնպէս, որ որոշ բառեր, երա-  
ժշտական որոշ արիաներ երբէք դուրս չեն գա-  
լիս մեր լիշողութիւնից, հանդիսատ չեն թողնում  
մեղ: Մենք երբեմն անդիտակցօրէն, նոյն իսկ մեր  
կամքին հակառակ կրկնում ենք այդ բառերը, այդ  
արիաները:

Դրանք ֆիզիօդիտական երևոյթներ են, որ  
ցոյց են տալիս մտքի ու նրա արտայայտութեան  
սերտ կապը, որ մատնանիշ են անում, թէ հիւան-  
դոտ երևոյթները որբան մօտ են ֆիզիօդիտական  
երևոյթներին:

Բայց թող այդ երևոյթները աւելի լարուած  
լինին, թող մտքում խօսքեր արտասանելու հակումը  
աւելի ուժեղ կերպով արտայայտուի և այն ժա-  
մանակ մենք կունենանք հիւանդութեան փաստ:

Հիւանդոտ երևոյթների և ֆիզիօդիտական  
երևոյթների տարբերութիւնը միմիայն այն է, որ  
երկրորդ դէպքում մենք կամքի ուժով կարողա-  
նում ենք ուղղութիւն տալ կամ զսպել այս կամ  
այն հակումը. իսկ առաջին դէպքում, այսինքն  
հիւանդոտ երևոյթների ժամանակ դա միանդա-  
ման անկարելի է:

Հիւանդները սովորաբար ասում են, թէ նրանց

»թւում է«, որ բառեր են լսում, որ մտքով խօ-  
սում են, որ առանց ձայնի լսում ու հասկանում  
են ուրիշի մտքերը և այն և այն:

Նրանց կարծիքով դա ողիների լեզուն է՝  
առանց բառերի լեզու. դա ներքին ձայնն է, գերբ-  
նական ներշնչումն է և այն:

Կարծում ենք վերոլիշեալլ բաւական է ցնորք-  
ների մասին:

## Ի՞Զ.

Քնի հետ կապ ունի նաև նեարդային համա-  
կարգութեան այն բնորոշ դրութիւնը, որը «Լուս-  
նոտութեան», անունն է ստացել:

Այդ երևոյթը կայանում է նրանում, որ լուս-  
նոտը խոր քնի մէջ բնկղմուած ման է գալիս, անծ-  
նատուր է լինում իր սովորական զբաղմունքներին,  
երբեմն կատարում է չափազանց բարդ ու դժուար  
գործեր նոյնպիսի վստահութեամբ ու նշտութեամբ,  
ինչպէս արթուն ժամանակ:

Լուսնոտութեան նշանները սովորաբար տեղի  
են ունենում գիշերները—քնելուց մի քանի ժամ  
յետով: Նրանք տեսում են աւելի կամ պակաս եր-  
կար ժամանակ:

Այս կամ այն գործողութիւնը կատարելուց  
յետով հիւանդը նորից պառկում է կամ նրան պառ-

կեցնում են, իսկ զարթնելիս նա ոչինչ չի լիշում  
իր դիշերային գործունէութեան մասին:

Զանազան մարդիկ զանազան ձևի լուսնոտու-  
թիւն են ունենում:

Ոմանք մնում են իրանց տեղում, շարժումներ  
չեն կատարում: Նրանք երկար նառեր են արտա-  
սանում, խօսում են, բաց են անում իրանց զազտ-  
նիքները, իսկ զարթնելիս ոչինչ չեն լիշում այդ  
բոլորի մասին:

Լուսնոտութեան այդ ձեր ամենից մօտ է  
բնական քնին:

Ոմանք էլ խօսելիս շարժումներ են կատա-  
րում, բայց չեն հեռանում մահնակալից:

Վերջապէս կան այնպիսի լուսնոտներ, որոնք  
վեր են կենում անկողնուց, սկսում են իրանց սո-  
փորական զբաղմունքները՝ կարդում—զրում էն,  
ոտանաւորներ են շարադրում, հաշիւներ են անում  
և ուրիշ բարդ գործեր են կատարում: Դա լուս-  
նոտութեան ամենաուժեղ ձևն է:

Լուսնոտները անկասկած լսում են ձայներ,  
մանաւանդ այն դէպքերում, երբ այդ ձայները հա-  
մապատճախանում են նրանց զբաղեցնող մտապատ-  
ճերներին:

Եթէ մենք արտասանենք լուսնոտի անունը  
— նա իսկուն յետ կ'գառնալ, լարուած կ'նալի մեղ,  
բայց ոչինչ չի տեսնի:

Թէւ ամեն անգամ էլ այդպէս չի լինում, բայց  
փաստն այն է, որ հիւանդը լսում է, ընդունում  
է ձայնի տպաւորութիւնը:

Լուսնոտի շօշափելիքը չափազանց զարգացած  
է: Բոլոր զննողներն էլ նկատել են այդ փաստը և  
նոյն իսկ ասում են, որ նրանց շօշափելիքը տեսո-  
ղութեան դերն էլ է կատարում:

Դա գուցէ մի քիչ չափազանցութիւն լինի,  
բայց հիմքը միանգամայն ճիշտ է: Զէ՞ որ կոյրերի  
շօշափելիքն էլ մշտական վարժութեան շնորհիւ  
հասնում է զարմանալի զարգացման ու նրբու-  
թեան:

Լուսնոտութեան ժամանակ հիւանդը մեծ մա-  
սամբ բաց է պահում աչքերը, իսկ երբեմն փակ:

Բայց եթէ ուշի-ուշով քննենք լուսնոտի բաց  
աչքերը, այն ժամանակ կ'համոզուենք, որ նրանք  
անշարժ են, որ բիբերը լայն բացուած են, բայց  
անզգայ դէպի լոյսը:

Կասկած չկայ, որ լուսնոտները մեծ մասամբ  
ոչինչ չեն տեսնում: Բայց մի քանի հեղինակներ,  
որոնք երկար ժամանակ զբաղուել են այդ հար-  
ցով, չեն համածախնուում այդ կարծիքի հետ:

Եթէ ենթադրենք, որ լուսնոտները անզգայ  
են դէպի լոյսը, ասում են նրանք, այն ժամանակ  
չափազանց դժուար կ'լինի բացատրել նրանց կա-  
տարած գործերից շատերը:

Ահա մի օրինակ, որ իր մէջ պարունակում է այն ամենը, ինչ որ կարող է հրաշքի տպաւորութիւն թողնել և ականատեսների վրայ մեծ աղղեցութիւն ունենալ:

—Մի երիտասարդ քահանայ ամեն զիշեր վեր էր կենում, վերցնում էր թուղթը և քարոզներ շարագրում:

Երեսը վերջացնելուց յետոյ նա բարձր ծախնով կարդում էր զրածը սկզբից մինչեւ վերջը, եթէ միայն կարելի է «կարդալ» անուանել այն, ինչ որ նա անում էր առանց աչքերի օգնութեան:

Եթէ մի որեւէ կաոր նրան դուր չէր գալիս, նա չնչում էր և վերեւում—միշտ համապատասխան տեղում ուղղում:

Որպէսզի իմանան, թէ արդեօք այդ ժամանակ նրա աչքերն էլ գործում են, թէ ոչ, մի անգամ նրա առաջ բռնեցին հաստ կարտոնի թերթը, բայց հիւանդը առաջուայ նման շարունակում էր զրել, առանց նկատելու այդ պատճերը

Մի քանի անգամ կամացուկ փոխեցին այն թուղթը, որի վրայ նա զրում էր, բայց հիւանդը իսկոյն նկատում է փոփոխութիւնը, որովհետեւ նոր թերթերը իրանց ծեռվ տարբերում էին հնից:

Իսկ երբ գնում են նոյնանման մի թերթ, այն ժամանակ հիւանդը չի նկատում կատարուած փոփոխութիւնը և շարունակում է զրել և ուղղել

զրածը նիշտ այն տեղերում, որոնք համապատասխանում են առաջուալ թերթին:

Այդպէս ուրեմն այդ լուսնոտը գործում էր նիշտ այնպէս, ինչպէս արթուն ժամանակ, կարծես ամեն ինչ զիտակցօրէն տեսնում ու լսում էր: Բայց նրա ամբողչ գործը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ մի նյուրը:

Այդ բոլորը բացատրում է նրանով, որ լուսնոտը ցնորական տպաւորութիւններ է ընդունում շրջապատող աշխարհից—իր մտքերի համեմատ և ընդհանրացնում ու մշակում է: Այդտեղ շատ մեծ դեր է խաղում շօշափելիքը:

Հէնց դա է պատճառը, որ նա մաքուր թերթի վրայ էլ նախադասութիւնն սկսում է նիշտ այն տեղից, որտեղ որ վերջացրել էր զրած թերթի վրայ: Գրած թերթը հեռացրած է, բայց մտապատկերը մնում է նոր թերթի վրայ և լուսնոտը շարունակում է տեսնել իր զրածը, թէև նա արդէն հեռացրած է:

Նա տեսնում է ոչ թէ իսկական զրածը, այլ նրա «ցնորական պատկերը»: Իսկ ցնորական պատկերները մեծ մասամբ ներկայացնում են իրական առարկան:

Լուսնոտի տեսած պատկերները առաջ են գալիս շօշափողական տպաւորութիւններից, որ և ընած ժամանակ էլ ստանում է:

Այդպիսով լուսնոտը արտաքին աշխարհի վերաբերմամբ գտնւում է նոյն դրութեան մէջ, ինչպէս արթուն մարդք:

Ի՞.

Աւելորդ չի լինի մի քանի խօսք էլ էքստաղի, այսինքն ծալրահեղ ոգեսրութեան մասին ասել:

Էքստաղ կոչւում է նեարդալին համակարգութեան այն դրութիւնը, երբ մարդ առանց մի որևէ շարժում կատարելու, կարծես քնի մէջ խեղդում է իր զգացմունքների մի մասը և կատարեալ աղատութիւն տալիս միւսին:

Նա պատկերների ձեռվ տեսնում է այն մտքերը, այն գաղափարները, որոնց վրայ կենարոնացած է եղել նրա ուշադրութիւնը:

Ուրիշ խօսքով ասած՝ էքստաղը մի հիւանդու դրութիւն է, երբ մարդու դիտակցութիւնը չափազանց ուժեղ զգացմունքների ու կենարնի մտապատկերների աղդեցութեան տակ բոլորովին բաժանւում է արտաքին աշխարհից և իր ամբողջ ուշադրութիւնը կենարոնացնում է ներքին պատկերների վրայ:

Այդ միենոյն ժամանակ անուշաղիր թողած մարմինը մնում է բոլորովին անշարժ իրեւ մի արձան:

Սյուպիսի դրութիւնը յաճախ միացած է լինում ուրիշ երեսովների հետ, ինչպէս օրինակ—իստերիա \*) (թուլացկոտութիւն) և կատալեպտիա \*) (զգայաշարժատումն):

Էքստաղը առաջ է գալիս լարուած կերպով կրօնական հարցերի մասին մտածելուց, ցնցող դէպքերի աղդեցութիւնից, իսկ երբեմն սաստիկ սիրուց:

Նա ընդունում է չափազանց աղդու և արտայալախիչ ձեւեր, որոնցից երբեմն կարելի է հասկանալ անհատին անհանգստացնող զգացմունքը:

Երբեմն հիւանդի բերանից դուրս են թուչում այնպիսի բառեր, որոնցով կարելի է հասկանալ, թէ ի՞նչ մտքեր են զբաղեցնում նրան, իհարկէ կրաւրական շարժումներ հնարաւոր են, բայց շարժումը գաղարեցնելու պէս մարմինը դարձեալ մրնում է այս կամ այն դրութեան մէջ անփոփոխ:

\*) Խստերիս կոչւում է իսիստ սահմանափակ և բոլորովին անշատուած նեարդային հիւանդութիւնը: Կա հիմնովին տարբերում է նեկրաստենիայից, կազմելով նրա կատարեալ հակապատկերը: Այդ մասին տես իմ «Մեր նեարդերը» գրքոյկը:

\*\*) Կատալեպսիա կոչւում է այն հիւանդութիւնը, երբ յանկարծակի փայտանում են մարմինի անդամները, մկանները, այնպէս որ մարմինը անշարժ մնում է այն դըրութեան մէջ, ինչ դրութեան մէջ որ նա եղել է կատալեպսիայի սկզբում:

Կամքը այլես չի ազդում մկանների վրայ: Ինքնակամ շարժումները բոլորովին անհնարին են դառնում:

Թէ ի՞նչն է տանջանք կամ ուրախութիւն առաջացնողը: Վերցնենք հետևեալ օրինակը.

— Եթուաղի մէջ գտնւող մի աղջկայ դիմագծերը մերթ ուրախութիւն էին արտայատում, մերթ տիրութիւն:

Այդ միւնոյն ժամանակ նա ծեռքով մի շարժում էր անում, կարծես լնդունում էր առաջարկած նամակը և կարդում:

Երբ նամակը Սուրբ Կոյսից էր, նրա դէմքը ուրախ արտայալտութիւն էր լնդունում, իսկ երբ սատանայից էր լինում—նա սասափկ զայրոյթ ու տիրութիւն էր արտայատում...

Եթուաղի մէջ գտնւող մարդկանց տեսած պատկերները միշտ էլ սերտ կերպով կապուած են լինում նրանց զբաղեցնող մաքերի ու առարկաների հետ:

Նրանք երբեմն չափազանց խորհրդաւոր բովանդակութիւն են ունենում:

Երեւում են՝ Աստուած, հրեշտակներ, սրբեր՝ մի առանձին փայլով շրջապատուած, կամ դժոխքի սատանաներ և այլն:

Հիւանդը լսում է դրանց ծալները, ստանում է զանազան պատուէրներ ու խորհուրդներ:

Մի հիւանդ լետարգիական <sup>\*)</sup> զրութեան մէջ ընկնելով, երեակալութեամբ այցելում է երկինքն ու դժոխքը:

— «Հինգչարթի, ճաշին մօտիկ, պատմում է հիւանդը, ես զգացի որ մօտենում է մահս, որ նա կամաց-կամաց բարձրանում է ոտներիցս դէպի վերև, դէպի միւս անդամները:»

Մարմինս փայտացաւ, ոտքերս, ծեռքերս և միւս անդամներս այլես ոչինչ չէին զգում:

Ես չէի կարողանում ոչ խօսել, ոչ տեսնել և լսել. բերանս չէր շարժւում. ականջներս ու աչքերս չէին զործում:

Այդ ժամանակ ինձ կայծակի արագութեամբ տարան անհուն տարածութեան միջով և հասցրին դժոխքի դուռը:

Այգաեղ տարածուած էին խիտ ամպերը և սաստիկ խաւարը: Ես զգում էի ծխի և դառն գուլորշիների հոտը, լսում էի ոռնոց և սարսափելի հեկեկոց:

Այգաեղից սուրբ հոգին ոսկեղէն կառքով ինձ տարաւ երկինք, որտեղ ես տեսալ խումբ-խումբ սուրբերին, հրեշտակներին, մարդարէներին ու առա-

<sup>\*)</sup> Լիտերգիա կոչում է անդպայական զրութիւնը, որը նման է քնած դրութեանը: Խըբեմն հնարաւոր է լինում հիւանդին զարթեցնել այդ զրութիւնից:

քեալներին, որոնք թարձրեալի գահութի շուրջը եր-  
գում ու խաղում էին:

Հրեշտակները նման էին վառ բոցերի, իսկ  
արդարների հոգիները փայլում էին կայծերի նման:

Հրեշտակներից մէկը յայտնեց ինձ Աստուծոյ  
պատուէրը: Ուշը գալով ես զգացի, որ մարմինս  
նորից կենդանանում է—զլիսից մինչեւ ոտքերը:

Ես լսում էի սենեակիս մէջ հնչող աղօթքներ:  
Դրանից յետոյ աչքերս էլ բացուեցին, բոլոր զգաց-  
մունքներս էլ վերադարձան և ես իմ մէջ եռանդ  
զգացի...»

Այդ գէպքից յետոյ մի քանի տարի շարունակ  
հիւանդը մերթ ընդ մերթ աեսնում էր նոյնանձան  
պատկերներ: Տեսիլը պատահում էր ցերեկը: Նա  
մնում էր աչքերը բաց, անշարժ, առանց ուտելիքի  
և խմելիքի մինչեւ որ «տեսիլը» անհետանար:

Իսկ վերջը... վերջը այդ թշուառ հիւանդը  
մեռաւ դժանոցում:

Թալց այս էլ պէտք է ասել, որ էքստազի մէջ  
գտնող մարդկանց «տեսիլը» միշտ էլ ալդպէս  
բարդ չի լինում: Շատ անդամ նրանք աեսնում են  
միայն մի առարկայ, մի անձնաւորութիւն՝ Աստու-  
ծուն, Յիսուսին, Սուրբ Կոյսին մի որևէ հրեշտա-  
կի, սատանալի կամ սիրած մարդու:

ԻԵ.

Շատ հետաքրքիր է այն հոգեկան հիւանդու-  
թիւնը, որը 1841 թուականին համանարակի նման  
տարածուել էր ամբողջ Շուէցարիայում:

Հիւանդները երգում էին սաղմոսներ, արտա-  
սանում էին քարոզներ հոգու փրկութեան, ահեղ  
վատաստանի մասին և ալին:

Այդ բնորոշ համանարակի պատմութիւնը հե-  
տեւալն է:

— Եղիսաբէթ անունով մի աղջիկ գանգատ-  
ում է կրծքի և զլիսի հիւանդութիւնից: Այդ միե-  
նոյն ժամանակ նա իր կածքին հակառակ ամբողջ  
օրերով երգում է:

Մկղբում նա միայն փոքրիկ մեղեղիներ էր  
երգում առանց բառերի, Ապա բառերն էլ է ար-  
տասանում: Վերջապէս նա սկսում է մաքուր ու  
սուր ծայնով երգել կրօնական երգեր, սաղմոսներ...

Մի քանի ժամանակից յետոյ նա սկսում է  
կրօնական քարոզներ արտասանել՝ սկղբում տասեր-  
կու օրը մի անդամ, իսկ յետոյ աւելի ու աւելի  
յանախ:

Նա ընկնում է էքստազի մէջ և զանազան յայտ-  
նութիւններ ու պատուէրներ ստանում նախախնա-  
մութիւնից:

Այդ ժամանակ նա երգում է, յետոյ սթափ-

ւում, զանազան չղածղութիւններ անում և քարո-  
ղել սկսում:

Նա այդպիսի եռանդով, այնպիսի ոգեսու-  
թեամբ է քարողում, որ շուտով ծածկում է քըր-  
տինքով...

Նա պնդում է, որ իր բերանով Սուրբ Հոգին  
է խօսում:

Այդպիսի ցնցող տեսարանների ազգեցութեան  
տակ ուրիշ բազմաթիւ կանալք ու աղջիկներ էլ  
ընկնում են էքստազի մէջ և հետեւում եղիսաբէթի  
օրինակին:

Նրանց աչքին երեսում է դրախար, Աստուած  
ու հրեշտակներ: Նրանք ընտրեալների հետ ճաշա-  
կում են աստուածալին սեղանից:

Երեսում է նաև դժոխքը, որտեղ տանշւում  
են մեղաւորները, որտեղ լի են չար ոգիները...

Դրանք բոլորն էլ Եղիսաբէթի նման քարո-  
զում են հոգու փրկութեան մասին, նախազուշա-  
կում աշխարհի վերջը, ահեղ դատաստանի մօտե-  
նալը, իրանց սեփական մահը և ալլ և ալլ...

Սակայն այդ գուշակութիւններից ոչ մէկն էլ  
չիրականացաւ...

Բազմաթիւ զրքեր կան, որոնց մէջ մանրա-  
մասնօրէն նկարագրուած են այդպիսի համաճարակ  
հոգեկան հիւանդութիւնները:

Երբ մարդ ուշադրութեամբ կարդում է այդ

ինքնակոչ քարոզիչների մասին, երբ քննում է նը-  
րանց մտքերն ու քարոզները, այն ժամանակ նկա-  
տելի է դառնում, թէ այդ երեսոյթները որքան  
նման են խելագարութեան զանազան ձեւերին—  
(Մանիա, Կատաղութիւն խեկական խելագարու-  
թիւն) և ալլ:

Եւ խեկապէս, խելագարներն էլ յաճախ յախո-  
նում են, թէ խօսում են իրանց կամքին հակա-  
ռակ, թէ բառերն իրանք իրանց են արտասանւում  
և ալլ:

Այդ բոլորը բացատրում է այն նշաններով,  
այն իմպուլսներով, որոնք տեղի են ունենում խօ-  
սակցութեան ու հոգեկան ցնորդների ասպարիզում:

Զանազան մտքերը, երբեմն անդիտակցօրէն  
ընդունած տպաւորութիւնները սահմանափակւում  
են ուղեղի մի որոշ մասում և յետոյ յախնեում  
բառերի միջոցով:

Երբ էքստազի, խելագարութեան կամ նեար-  
դալին մի որևէ հիւանդութեան ժամանակ անհա-  
տի ուղեղին հասնում է մի զրգիռ, որը համապա-  
տասխանում է նրա տրամադրութեան, այն ժա-  
մանակ աննկատելի մնացած պատկերներն ու զա-  
ղափարները նոյն խեկանց կամքի և ուշադրու-  
թեան օգնութեանը առաջ են գալիս և պէս-պէս  
երեսոյթների պատճառ դառնում:

Այդպիսի պայմաններով շրջապատուած մարդը

կարծում է, թէ իր վրայ աղդում է մի արտաքին ոլժ, անկախ նրա կամքից ու ցանկութիւնից:

Իւրաքանչիւր անհատ ունենում է բազմաթիւ անդիտակցական լիշողութիւններ, որոնք նպաստաւոր պայմաններում կարող են նորից առաջ գալ: Եւ դա միանգամայն հասկանալի է, ամեն մի ըստէ մեր զգայարանքներն ընդունում են բազմազան տպաւորութիւններ, որոնց մի մասը բոլորովին չի հասնում գիտակցութեան:

Այստեղ ամենազիխաւոր դեր կատարողը զլիսի ուղեղի գորշ նիւթն է, իսկ նրա տակը—սպիտակ նիւթը՝ իր հետ կապուած նեարգերով:

Իսկ ի՞նչով բացատրել համաճարակ էքստազի ժամանակ արտայալտող մարզարէութիւնը:

Վերեռում ասացինք, որ Շուէլցարիալում (1841 թ.) տեղի ունեցած հոգեկան համաճարակի ժամանակ, թէ Եղիսաբէթի և թէ միւս կանանց գուշակութիւններից ոչ մէկը չիրականացաւ:

Այդ միւնոյնը նկատուել է ամեն տեղ: Իսկ եթէ մի քանի դէպքերում գուշակութիւնն իրագործուել է—դա կարելի է բացատրել զուգագիպութեամբ, կամ նրանով, որ երբեմն մարդ որոշ չափով նախատեսնում է զալիք դէպքերը: Ուրեմն բոլորովին աւելորդ է զրանց մէջ հրաշք կամ գերբնական զօրութիւն որոնելը:

Առողջ դատողութիւնն այնքան զօրել է, որ

երբ մուտք է գործում մարդկալին գործունէութեան, կրօնի, քաղաքականութեան, օրէնսդրութեան մէջ, ամեն ինչ վերլուծում է, ամեն ինչ քննում է և բացատրել աշխատում...

Գիտութիւնը միշտ սիրում է հետեւողականութիւն: Նա աստիճանաբար բարձրանում է դէպի վերև, անցնում է մի հրաշքից դէպի միւսը: Իսկ ժամանակ առ ժամանակ մի որեւէ գիւտ ուժանակի նման քարուքանդ է անում սնուախապաշտութեան և նախապաշտրմունքների ամբողջ պատր...

Օրինակ՝ կար ժամանակ, երբ Էլեկտրականութիւնն էլ գերբնական ոլժ էր համարւում, բայց զիտութիւնը քանդեց այդ սխալ կարծիքը և բաց արեց գաղտնիքը:

Բազմաթիւ փորձեր էին հարկաւոր, որպէսզի մարդը հասկանար էլեկտրական ոլժի նշանակութիւնն ու հետեւանքները: Դեռ շատ բան է առլումեղ այդ ոլժը...

Դեռ որքան պիտի աշխատենք, որքան պիտի քայլենք առաջադիմութեան ուղիով...

### ԵՐԿՈՒ ԽԾՄՔ ԵՒՍ

Երկար ժամանակ մենք քնած ենք եղել և ալժմս էլ գեռ քնած ենք: Ամեն տեղ և ամեն բանի մէջ քունն է իշխում:

Մենք շատ բան ենք երևակայում, շատ երազ-  
ներ ենք տեսնում, բայց դժբաղդաբար, մեր երազ-  
ներից քչերն են իրագործում:

Իմ ծանօթներից մէկը զրեթէ ամեն օր երազ  
էր տեսում՝ լաւ-լաւ երազներ: Բայց ի՞նչ օդուտ,  
երբ նրանք մնում էին անիրազործելի...

Սակայն չ'պէտք է տիրել ու յուսահատուել:  
Մի՛թէ մեզանում ամեն ինչ մեռած է, մի՛թէ մեր  
մէջ կեանք ու եռանդ չէ մնացել:

Բանական մարդու, հասարակութեան և ազգի  
կեանքը պէտք է հիմնուած լինի վառ գործունէու-  
թեան, աշխատանքի վրայ: Աւելի լաւ է մահը,  
քան թէ քնած կեանքը:

Արժէ մեռնել լէօնիդի նման—յանուն հայրե-  
նիքի, Սոկրատեսի նման—յանուն ճշմարտութեան  
և առողջ դատողութեան, Յիսուսի նման յանուն  
եղբայրութեան ու սիրոյ...

Դրանից մէջ ու գեղեցիկ բան չկայ...

Սպրել—կ'նշանակէ հասկանալ և հոգով ու  
մարմնով ըմբռնել ժամանակի ողին, լինել պիտա-  
նի անդամ համամարդկային հասարակութեան:

Ժամանակը կանդ չի առնում: Նա թռչում  
է անկարազելի արագութեամբ: Երկարատև քունք  
կ'սպանէ մարդուն՝ թէ ֆիզիքապէս, թէ բարո-  
յապէս և թէ մտաւորապէս:

Բայց միայն բարի ցանկութիւնը բաւական

չէ: Հարկաւոր է հաստատուն կամք ու եռանդ:  
հարկաւոր է աշխատանք:

Այս, պէտք է միշտ աշխատել: Իսկ ի՞նչ ուղ-  
ղութեամբ...

Ահա իմ ծանօթի երազներից մի քանիսը,  
որոնք համամարդկային նշանակութիւն ունին, ո-  
րոնց իրագործուելը ցանկալի է ամեն տեղ, ամեն-  
քի համար:

1) Կատարելագործուած երկրագործութիւն:  
Հողը մշակում է զիտութեան վերջին խօսքի հա-  
մեմատ: Քանի որ դեռ չկան խկական գործարան-  
ներ, որտեղ բանւորներն իրանք լինեին սեփակա-  
նատերեր, երկրագործութիւնը ժողովրդի գլխաւոր  
զբաղմունքն է: Գիւղերում տարածուած է համաշ-  
խատակցութիւնը - կօօպերատիւ գործունէութիւնը:

2) Գործարանում եռում է աշխատանքը: Բան-  
ւորն իրանք են սեփականատերեր, իրանք են վայե-  
լում իրանց աշխատանքի ամբողջ արդիւնքը: չկաչ  
ճնշում ու շահագործումն:

3) Տօն և կիրակի օրերը քաղաքացիները ի-  
րանց երեխաների ու ծառաների հետ անց են կաց-  
նում բնութեան զրկում: Այստեղ նրանք երգեր են  
երգում, նուագում, խաղում ու մարմնամարդկան  
վարժութիւններ կատարում:

4) Տեղի են ունենում ճնողների համախմբում-  
ներ, շաբաթական գոնէ մի անգամ—իւրաքանչիւրը

ամենաքիչը 5—6 հոդուց բաղկացած։ Այդ ժողովներին մասնակցում են թէ կանալք և թէ տղամարդիկ։ Զբազմունքի առարկաներն են առողջապահութեան ու դաստիարակութեան վերաբերեալ հարցերը։ Իհարկէ կան և ուրիշ ժողովներ՝ ինքնակրթութեան ու ինքնազարդացման համար։

5) Կատարեալ թշուառ և գֆբաղդ աշխատաւորները ծանր բովեւմ ապաստարան ու կերակուր են ստանում «Աշխատութեան աներում», որոնց ճակատին զբուած է.—«Ով որ ուզում է աշխատել, նա ախտեղ կ'գտնի ապաստարան ու կերակուր»։

6) Այլևս չկան տղալոց ու օրիորդաց առանձին-առանձին դպրոցներ։ Երկու սեռն էլ միատեսակ կրթութիւն ու զարգացում է ստանում միենոյն դպրոցում։

7) Հարսնացուն ու փեսացուն ձեռք - ձեռքի տուած դալիս են բահանալի մօտ, ցայց են տալիս բժշկի վկայականը և ասում։—«Տէր-հալը, պսակի՞ր ձեղ, մենք բոլորովին առողջ ենք և պատրաստ ամուսնական կեանքի համար։ զիտենք, առողջապահութեան և դաստիարակութեան հիմունքները»։

8) Իւրաքանչիւր անհատ իր ոյժի չափով ծառայում է մերձաւորների ու հասարակութեան, զիտէ կարգալ ու զրել մայրենի լեզով։ Ընտանիքը դաստիարակութեամբ չի անցկացնում իր աղատ

ժամերը—ծերունի հայրը երեկոները կարդում է սուրբ զիրքը և բացատրում, իսկ միւս անդամները լսում են ուշադրութեամբ։

Ուրեմն թող իւրաքանչիւր մարդու պարձանք-ներից մէկը լինի այն, որ նա իւր կեանքում գոնէ երեք մարդու սովորեցրել է, մայրենի լեզուով կարդալ ու զրել և յօգուտ մերձաւորներին ծառայեցնել իւր սովորածը։

Հայաբնակ բաղաքներից մէկում ապրում էր մի բարի արձաթագործ, որը ունէր հինգ աշակերտնա ընդհանրապէս արհեստանոցում բանում էր առաւուեան ժամը վեցից մինչև երեկոյեան իննը։

Իմանալով որ աշակերտները զրագէտ չեն և յանկանալով նրանց ժամանակ տալ գոնէ կարդալ զրել սովորել, նա այնուհետեւ սկսեց բաց անել արհեստանոցը ժամը եօթից մինչև երեկոյեան եօթը և օրուայ մէջ նաշի և հանգստութեան համար մի ժամ աղատ թողնել տուն։

Շնորհիւ այդ խելացի միջոցների աշակերտները աւելի սրավով էին աշխատում արհեստանոցում և կարելի է ասել պաշտում էին իրանց վարպէտին։

Անցնում է մի տարի և այդ հինգ աշակերտներից չորսը արդէն կարդալ զրել բաւականին զիւէին և կոպէկ կոպէկ հաւաքելով, այժմ լրագիր և զրքեր են ստանում—աւելի զարգանալու և հա-

սարակութեան համար աւելի օգտակար անդամ-  
ներ լինելու համար:

Ահա ձեզ բարի և ցանկալի օրինակ, որին  
պարտաւոր ենք ամենքս հետեւել:

Անդրկովկասեան մի քանի արհեստաւորների  
մէջ մի համակրելի միտք է յղացել՝ իրանց արհես-  
տանոցներում անպայման ընդունել աշակերտ  
միայն գրադէտներին...

Միայն գրադիտութեան լայն տարածուելլ  
ժողովրդի մէջ, կարող է մեծ օգուտ բերել նրան  
թէ բարոյապէս և թէ տնտեսապէս. աշխատենք  
ուրեմն հազարներով տարածել ժողովրդի մէջ, դոնէ  
մի կոպէկանոց «Այբուբէն», որից դժբաղդաբար  
մինչև այժմ մեր խեղճ ժողովուրդը դրկուած է—  
այդ համամարդկային բարիքից:

---

Ե. ԹՈՓՉԵԱՆԻ

Խ Մ Բ Ո Գ Բ Ո Կ Թ Ե Ո Մ Բ

ՊԱՏՐԱՍՏԻՈՒՄ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ.

## „ԼՈՅՄ“

Մեղանի (1 ո.) պատի (50 կ.) և ծոցի (20 կ.) պատ-  
կերազարդ օրացոլցներ 1904 թ.

Վ. Ի Զ Ա Կ Ա Վ Գ Ր Ա Կ Ա Ն, Գ Ր Ա Կ Ա Ն Ա Կ Ա Ն, Գ Ի Տ Ա Կ Ա Ն

Եւ

ԳԵՂԱՐՈՒԻԵՍՑԱԿԱՆ

### ՀԱՐՈՒՄ ՅԱՒԵԼՈՒԱԺՆԵՐՈՎ


Վշիստակիցներն են՝ Վհարոնեան Ա., Վռաքելեան  
Հ., բժ., Վրձրունի Ա., բժ. Խուզուղեան Ա., Օւարեան  
Ա., Ձառւմանեան Յ., Խսահակեան Ա., Լէօ, Լիսիցեան  
Ատ., Վտամնաբոյժ կամկաճեան, Մալխասեան Ատ., Վտամ-  
նաբոյժ Մակարեան, Մեծատուրեան Գ., Յովհաննիսեան  
Միր., Յովհաննիսեան Տ., բժ. Յովհաննիսեան Հ.,  
Շանթ, Շիրվանզագէ, Զորանեան Ա., Պոօշեան Գ.,  
Տիգրանեան Կ., (երաժիշտ), Տիգրանեան Ա., Տէր Մինա-  
սեան Արշ. Քն., Տէր-Միրաքեան Յովլ., բժ. (Օ)հանեան  
Քր., Փափաղեան Ա բժ., դ-ր Փաստրմաճեան և այլն:

«Լոյսն» իր չքիլ արտաքինով—(բազմաթիւ գու-  
նատիպ պատկերներ)—և բազմակողմանի բովանդակու-  
թեամբ, լինելու է ամեն մի ընթերցողի խորհրդատու-  
լուկերը, ամեն մի ընտանիքի սեղանի գեղեցիկ զարդը:

Մանրամասնութիւնների մասին իր ժամանակին  
կ'յայտարարուի պարբերական թերթերում:

Ոեղանի օրացոլցում կ'տպագրուին՝ յայտարարու-  
թիւններ բոլոր լեզուներով վճարը—2 կոպ. իւրաքան-  
չեւր բառի համար: Հարիւր բառից աւելի յայտարարու-  
թիւններին 20% զիջում:

Դիլիջել Տաֆլուչ Ե. Տոպčianу, Տր



19 APR

11

1863

ՀԵՂԻՆԱԿԻ ԼՈՅՍ ՏԵՍԱՅ ԱՇԽԱՏՈՒԹ.

|     |                                                                |      |
|-----|----------------------------------------------------------------|------|
| 1.  | Վռաջին օգնութիւն մինչև բժշկի դալը (սպառ.)                      | 5 կ. |
| 2.  | Վարակիչ հիւանդութիւններ                                        | 5 »  |
| 3.  | Խնչ է սիֆիլիսը                                                 | 5 »  |
| 4.  | Վռողջապահական զրոյցներ                                         | 5 »  |
| 5.  | Խնչ է ժուժկալութիւններ                                         | 5 »  |
| 6.  | Խնչ է անառակութիւններ                                          | 5 »  |
| 7.  | Վեներական ախտներ                                               | 5 »  |
| 8.  | Վշակերտի առողջապահութիւն (թարգմ.)                              | 2 »  |
| 9.  | Վեր նեարդերը                                                   | 10 » |
| 10. | Վիֆիլիս (բարեփոխուած)                                          | 10 » |
| 11. | Վռողջ հոգին առողջ մարմինի մեջ                                  | 10 » |
| 12. | Գեղձախտ (զօլօտուխա)                                            | 10 » |
| 13. | Վվէ յանցաւորը                                                  | 15 » |
| 14. | Կարիք և բարեգործութիւն                                         | 15 » |
| 15. | Ջառանդականութիւն և գաստիարակութիւն.                            | 15 » |
| 16. | Վանկավարժական համառօս զրոյցներ.                                | 15 » |
| 17. | Վարմնամարզութիւն (25 պատկերներով)                              | 20 » |
| 18. | Վռողջապահական նուեր նորատի կանանց.                             | 20 » |
| 19. | Վինը և տղամարզը.                                               | 15 » |
| 20. | Վիբարուժական հիւանդութիւն և օպերացիա                           | 5 »  |
| 21. | Խնչ է կաշու հիւանդութիւններ.                                   | 15 » |
| 22. | Երիտասարդութիւն և ծերութիւն.                                   | 15 » |
| 23. | Վռողջ ու հիւանդ երեխայի ողին                                   | 20 » |
| 24. | Վւղեղի սիֆիլիսը (գլխի և ողնաշարի)                              | 20 » |
| 25. | Ստամոքսի կատարը                                                | 20 » |
| 26. | Վրուն և երազ                                                   | 25 » |
|     | (Մեծագիր պատկեր արուն և երազ) շբել թղթի<br>վրայ առանձին 10 կ.) |      |

ԳԻՆՆ Է 25 ԿՈՊ.

«Պուշկինեան Արագատիայ» Ա.-Պետերբուրգ, Լեշտուկով փ. տ. 4.

8537